

Հոլիանդներ Թուրքմանյան

ԹԵՊԵՏԵԿ ԲԱԽՏԸ ՄԵԶ ՀԱՏ ՀԱՐԿԱԾԵՅ՝...

Երկար դարերով, ասեղ հարվածով,
Թեպետև էսպես ցովեց, տարածեց,
Զըզեց հողեհող, փըռեց ծովեծով,
Վկա է սակայն բովանդակ երկիր,
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու գիր-
Կենդանի է դեռ հայության ոգին:
Եվ թարմ աղմուկով մանկուհեք մեր մատաղ
Առաջ են խաղում լուսավոր տենչով,
Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ
Չարագատ լեզվով, հայտենի շրմչով:

Եվ իր փրկատակ տրմների տակից
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ:
Ո՛վ դուք սրբազան Մասիս, Արագած,
Էդ ձեր երկնամուխ գոհար թագերով,
Եվ որ նրանցից վերև խոյացած
Փայլատակում եք լույս-պըսակներով-
Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք,
Որ լոգոքի Յայոց աշխարհքն ու սրտե՛ն

Լուսավոր կյանքի սիրով երջանիկ
Ու ծրգտում տրվի՛ր- ծրգտել դեպի վեր,
Քանի որ դուք կաք, քանի կըմնաք,
Հոյակապ սյուներ հայության ոգու,
Մենք միշտ անասա՜ն առաջ տի գնանք,
Ինչքան մեր ճամբան լինի ահարկու:
Եվ տո՛ն կըտո՛նենք էսպես խնդագին,
Եվ թող իժմա՛ն բովանդակ երկիր-
Ապրում է անմե՛ռ հայությունը հին,
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

«ԹՈՒՄԱՆՅԱՆԸ»՝ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Աշխարհի որ անկյունում էլ որ լինի, որտեղ թեկուզ մեկ հայ է ապրում, այնտեղ շնչում ու ապրում է Թումանյանը, քանզի առանց Թումանյանի աշխարհը դատարկ է ու անիմաստ, զուրկ՝ վեհ արժեքներից: Որտեղ որ Թումանյանը է ապրում, այնտեղ մարդիկ բարի են ու հոգատար, կամենցող են ու մարդասնոտ, հեռու՝ չարամիտներ:

Վերջերս «Թումանյանը» Մոսկվայում է՝ հազեցնելու այն ծարավը, որով պապականություն են մոսկվաբնակ հայերը. նրանք շատ են տենչում Թումանյանի խոսքն ու նրա արժեքները:

Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը մանրամասնեց մոսկովյան հետաքրքիր հանդիպումները՝ հավելելով, որ շրջագայությունների միջոցով փորձում են Թումանյանի ուղերձները տարածել ոչ միայն մարզերում, այլև Հայաստանից դուրս:

Յուսկվալի ԴԴ դեսպա-
նության մշակութային
կենտրոնից ու սիրով
համաձայնեցին:

Հունիսի 7-10-ը գտնվում էին Մոսկվայում: Այնտեղ հանդիպումներ ունեցան Մոսկվայի ՀՀ դեսպանատան մշակու-

Հայերի միության գրական խմբակի անդամների հետ և կիրականորյա դպրոցում: Ծրագրի նպատակը թունանյանի և թունանյանա-

Լան արժեքների հանրահոշակումն էր Մոսկվայի հայ համայնքում, հայկական վարժարաններում և մշակույթի կենտրոնի հայագիտական բաժնում:

Միջոցառումն ամբողջությամբ նվիրված էր ֆաշիստական Գերմանիայի դեմ խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 80-ամյակին:

Երկօրյա ծրագիրն ուներ երեք բաղադրիչ՝ կրթական, որն ընդգրկում էր թեմատիկ ֆիլմեր և մուլտֆիլմեր, «Թումանյանը՝ ճամփորդ» թեմատիկ ցուցադրություն և դասախոսություններ:

Առաջին օրը պատանուների ցուցադրություն կատարվեց, որտեղ երևում էր թուժամայանի ճամփորդական քարտեզը: Ցուցադրությանը զուգահեռ ընթացավ Լուսինե Ղարախանյանի դասախոսությունը ճամփորդականի մասին. «Թուժամայանի ճամփորդությունները Արևմտյան Հայաստանի Անի բեղդաքաղաք ուղիղ աղերս ունեն բեր-

դաբաղաբքը նկատմամբ ունեցած նրա գիտական ու գեղարվեստական հետաքրքրության հետ, որն արտացոլվել է ոչ միայն նրա գեղարվեստական ստեղծագործություններում («Հովվականներն Սմբատ» ողբերգությունը, «Սմբատ Բ» խորագրով պատմադրամանկական անավարտ երկը), այլև երկու



Ճամփորդությունների (1901, 1904) ժամանակ նրա կողմից արված լուսանկարչական նեգատիվներում ու լուսանկարներում:

➡ 2

ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ


Գրող-ընթերցող կապն ամրաճում է ոչ միայն հեղինակների ստեղծագործությունները բարեխղճորեն կարդալով, այլ նաև գրչի մշակների հետ հանդիպումներով: Կենդանի շփումն, անձուշտ, գրողին ավելի լավ ճանաչելու, նրա ներքնաշխարհն առաավել խորքային ընկալելու հնարավորություն է տալիս, հատկապես հեղինակներին ուղղված հարցադրումների պատասխանները տեղում ամնիջապես ստանալու պայմաններում:

Դժվար է այսօրվա ընթերցողական ակտիվությունը համեմատել, ասենք, խորհրդային ժամանակների հետ: Հայտնի է, որ խորհրդային Միությունում ամենաշատ գրքեր, բնակչության համամասնությամբ, տպագրվում էր Հայաստանում: Ընդ որում, եթե ապավինելու լինենք վիճակագրությանը, ապա մեկ շնչի հաշվով ՀԽՍՀ-ում տպագրվում էր 5 գիրք: Բնակչությանը, դրանք հրատարակվում էին ոչ թե գնադարակները զարդաբեղու, այլ կարդալու հա-

մար: Եվ այս պարագան մեզ հուշում է, որ հայ մարդը գրքի հանդեպ միշտ էլ առանձնակի վերաբերմունք է ունեցել (ընդ որում, դա վերաբերում է նաև Արցախին):

Անկախ նրանից, թե ինչ աշխարհաքաղաքական կամ սոցիալ-իդեոլոգիական պատճառաբանում ունի ընթերցասիրությունը, մեկնապատեղի նվազումը, գիրքը եղել ու մնում է վստահելի զրուցողներ ու ինչու չէ՞ որոշ առումով մաս ուսուցիչ։ Այս համատեքստում կարելի է զնահատել մաս գրողներ Լեռնիկ

Հակոբյանի, Կիմ Գաբրիելյանի և Բաբկեն Սիմոնյանի հետ երևանի Ն. Աճեմյանի անվան տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջի դասախոսական կազմի և ուսանողության հանդիպումը:



Ուսանողները լավ էին նախապատրաստվել այդ հանդիպմանը, որովհետև ոգևորված կարդում ու արտասանում էին հյուրընկալված գրողների ստեղծագործություններից, նրանց ուղղում տարբեր բնույթի հարցեր: Մասնավորապես, եղան հարցեր նրանց ստեղծագործական պլանների մասին, որոնց շուրջ հանդես գալով, հյուրերը ներկայացրին իրենց ծրագրերը ընթերցողական լսարանի հետ ստեղծագործական նոր առերսույմների վերաբերյալ: Գրողի համար կարևորը ասելիք ունենալն է, իսկ դրանց

գեղարվեստական վերարտադրությունը թերևս մասնագիտական հնարամտության հարց է: Յուրաքանչյուր գրչի նշակ համոզմունք է գալիս իր ուրույն ոճով ու ձեռագրով, և արարված ստեղծագործական արտադրանքն էլ դառնում է այլոց սեփականությունը, բնականաբար, այն ընդունվելով գեղագիտական խստապահանջությամբ...

Քուլեջի տնօրեն Նարա Յովհաննիսյանը միջոցառման վերջում շնորհակալություն հայտնեց գրողներին իրենց հրավերն ընդունելու համար և հույս հայտնեց, որ այսօրինակի հանդիպումները շարունակական կլինեն: Լ. Յակոբյանը, Կ. Գաբրիելյանը և Բ. Սիմոնյանը նույնպես նշեցին, որ լավ տպավորություն են ստացել միջոցառումից և հետագա հանդիպումների հույս հայտնեցին՝ միաժամանակ շնշտելով, որ մեմո համդիպումները երկուստեք օգտակար են:

Սեփ. լրատվություն



ԶԱՅՆ ՄԱՆԿԱՆՑ՝ ԶԱՅՆ ԱՄՏԵՈՒ

ԱՐՃԱՄԻ ԵՐԵՄԱՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

Այսօր ամբողջովին հայաթափ Արցախը բոլորիս մտքում է, կանչում է իր տիրոջը: Ծանր իրողությունը տանջում է և ստիպում՝ արցախցին հնարավորինս միասին լինի՝ անկախ ՀՀ որ տարածքում է բնակվում, թեկուզ՝ արտերկրում: Այս առումով կարևոր է, որ հաճախակի կազմակերպվեն մշակութային, հոգևոր միջոցառումներ:

Հունիսի 2-ին Երևանում՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) դահլիճում, կայացավ «Արցախի երեխաները՝ հանուն աշխարհի երեխաների իրավունքների» խորագիրը կրող համերգը:

Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցը, որը, ցավոք, գրեթե երկու տարի է այլևս չի գործում իր ծննդավայրում, 2023թ. հունիսի 15-ին շրջափակման դաժան պայմաններում պատվով ու հպարտությամբ մեկ է հիմնադրման 85-ամյակը: Այժմ Երևանում գործող «Կոմիտասի անվան մշակույթի կենտրոն» հասարակական կազմակերպությունը այս դպրոցի իրավահաջորդն է և շարունակում է աշխատել իր նախկին ու նաև նոր սաների հետ: Նույն ՀՀ-ի նախաձեռնությամբ ու-

սուցիչների ու սաների մասնակցությամբ էլ կայացավ խորհրդանշական համերգը:

Երեկոն բացեց ու ներկաներին ողջունեց լրագրող ու հաղորդավար Լիանա Աղամյանը: Նրա առաջարկով ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախյան բոլոր պատերազմներում, ՀՀ սահմանները պաշտպանելիս նահատակված քաջորդիների հիշատակը: Դահլիճում ներկա էին հերոսածին մայրեր, հարազատներ կորցրածներ, երաժիշտներ, մշակութային գործիչներ, ծնողներ, հյուրեր:

Երևանյան հիմնգործող, իսկ ՀՀ-ում 7-րդ (Դիլիջանում մասնակցել են փառատոների) համերգն սկսվեց «Հորովել» երգով: Այնուհետև էկրանին ցուցադրվեց դպրոցի մասին պատմող տեսաֆիլմ: Երևանում առաջին համերգը կայացել է «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, երկրորդը՝ Կ. Սարաջյանի անվան դպրոցում: Ստեփանակերտցիներին աջակցել է Էմենատ Պիչիկյանը, որի հետ տարիներ շարունակ համագործակցել են «Արտ Մյուզիք» մրցույթ-փառատոնի շրջանակում: Երրորդը Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում

էր, չորրորդը՝ Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը՝ Կոմիտասի անվան կամերային երաժշտության ազգային կենտրոնի աջակցությամբ:

Իր ողջույնի խոսքում Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի տնօրեն Զարինե Բաբայանն ասաց. «Այսօր



հավաքվել ենք մեկու ոչ միայն երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, այլև միասին ուժեղացնելու մի շատ կարևոր ծայն՝ Արցախի երեխաների ծայնը, որը ծնվել է ցավի միջով, բայց խոսում է հույսի լեզվով: Դա այն երեխաների ծայնն է, որոնց մանկությունը կանգ առավ թնդանոթի ծայնի

տակ, որոնք ստիպված եղան թողնել իրենց տները, խաղալիքները, ընկերներին...», բայց չթողեցին երազելը...»: Ներկայացրեց 85-ամյա դպրոցի հաջողությունները՝ ցավով հավելելով. «Բայց այսօր այդ դպրոցի դռները փակ են: Այն վայրում մութ է, և այդ մութն անց է գալիս մեծ մեծ պատասխանատվություն, որովհետև հենց այդ դպրոցի վերջին տնօրենն են ու պարտավոր են հիշել բոլոր նրանց, ովքեր կերտել են այդ տունը...»: Շնորհակալություն հայտնեց Երևանում իրենց օգնող, սատարող բոլոր կառույցներին, անհատներին: Իրենց վստահելու և բեմը տրամադրելու համար

երախտագիտություն հայտնեց ՀԲԸՄ-ին և «Կարիթաս Հայաստան» կազմակերպությանը: Տեղեկացրեց՝ հաջորդ համարը՝ «Վալս»-ը, որ հնչեց դպրոցի սաներից Վլադիմիր Գալստյանի կատարմամբ, նվիրված էր դպրոցի նախկին տնօրեն, կոմպոզիտոր, ակորդեոնահար Էդուարդ Ղազարյանի հիշատակին: Համերգի ընթացքում եղան

տարբեր կատարումներ երաժշտական տարբեր գործիքներով, հնչեցին երգեր՝ հիմնականում համաշխարհային ճանաչում ստացած դասական գործեր, ինչպես նաև՝ արցախյան բանահյուսությունից: Համերգը եզրափակվեց Լիլի Գրիգորյանի «Ապրել խաղաղ» երգով, որը կատարվեց բոլոր սաների, այդ թվում՝ փոքրիկների մասնակցությամբ: Հնչեց նաև Հայոց բանակի օրհներգը:

Բոլոր երեխաները կազմակերպիչների կողմից նվերներ ստացան: Համերգի ընթացքում փոքրիկներն Արցախյան պատկերներ էին նկարել և նվիրեցին հանդիսատեսներին:

Ներկաներին ողջունեցին ու Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի անցած ուղու մասին ներկայացրին ԱՀ մշակույթի նախկին նախարար, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի թեմական խորհրդի ատենապետ Լեոնիկ Հովհաննիսյանը, երգիչ Արսեն Գրիգորյանը՝ Մրոն, Մշակութային ժառանգության փորձագետ, ԵՊՀ դասախոս Արմինե Տիգրանյանը, ծնողներ: Բոլորի խոսքում կար տուն վերադառնալու հավատ:

Ջոհրաբ ԸՈՋՈՅԱՆ

«ԹՈՒՄԱՆՅԱՆԸ»՝ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

15 լուսանկարչական նեգատիվներն ու լուսանկարները: Այդ նեգատիվներից ստացված նկարները տարբեր առիթներով ցուցադրության մյուս են դառնում թանգարանային գործունեության համար:

Հովհաննես Թումանյանի կերպարը՝ որպես լուսանկարչի, նվազ է բացահայտված: Քչերին է հայտնի, որ լուսանկարելը բանաստեղծի նախասիրություններից էր: Առաջին լուսանկարչական սարքը ծեռք է բերել 1896 թվականին: Ունեցել է երեք տեսախցիկ, որոնցից ոչ մեկը, ցավոք, չի պահպանվել: Լուսանկարչական մշակույթը նրա ընտանեկան, անձնական ու հանրային կյանքի անբաժանելի մասն էր: Լուսանկարներում իր առանձնահատուկ տեղն ունի նաև Անի բերդաքաղաքը (Անի. Մայր տաճար (1901), Անի. Աղջկա բերդը (1901), Անի. Ապուղամբենց եկեղեցին (1901), Անի. Պարոնի պալատը (1901), Անի. Բագրատունիների պալատը (1901), Անի. Առաքելոց եկեղեցու ավերակները (1901) և այլն):

Անիի լուսանկարների ցուցադրությունը դարձել է շրջիկ: Ցուցադրվել է նաև Արցախում՝ Շուշի և Ստեփանակերտ քաղաքներում (2013թ.):

Բանաստեղծ Հովհաննես Կոստանյանի հուշերում կարդում ենք. «Թումանյանը հաճախ, այդ հուշարձանների առաջ կանգնած, բացակայում էր:

-Ի՞նչ հոյակապ ճարտարապետություն, որքա՜ն բարձր մշակույթ է եղել, որքա՜ն ճաշակ, եռանդ և աշխատանք, և դարերից հետո նայում են էնպես, կարծես երեկ են շինվել...»:

Ավետիք Իսահակյանն էլ գրում է. «Անին իր հիասքանչ ճարտարապետությամբ շատ մեծ տպավորություն թողեց Օհաննեսի վրա: Երբ մեկնում էինք Անիից և պարիսպներից դուրս էինք արդեն, Օհաննեսը վերջին անգամ մայեց Անիին և ասաց.

- Ինչքա՜ն մարդ պիտի անբան-անասուն



լինի, որ ծեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա: Մի՞թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա: Այսօր զարգացման ի՞նչ աստիճանի հասած կլինեն մեր արվեստը, եթե թուրք-թաթար ցեղերը չքայքայեին մեր ժողովրդին»:

- Առաջին օրը ցուցադրված ֆիլմը նվիրել էինք Վիգեն Թումանյանին,- շարունակում է թանգարանի տնօրենը,- հաշվի առնելով, որ նա Հայրենական մեծ պատերազմում զոհվել է ընդամենը 21 գարունը բոլորած:

«Թումանյանը և ռուս գրականությունը» թեմայով դասախոսությամբ հանդես է եկել թանգարանի գիտաշխատող Մարինա Բաղդասարյանը:

Նույն օրը կազմակերպել ենք նաև «Ռուկեղարան»-ի շնորհահնդեսը, որն անընդհատ համալրվում է և առաջիկա ամիսների ընթացքում կունենա Թումանյանի պոեմները, լեզենդները, քառյակները, և, ինչպես խոստացել էինք, այն կդառնա ընտանեկան հավելված»:

ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի կողմից թանգարանի տնօրեն Լուսինե Ղարախանյանը և գիտաշխատող Մարինա Բաղդասարյանը պարզևատրվել են դիպլոմներով, իրենք էլ Նվարդ Թումանյանի երկհատորյակն են նվիրել կենտրոնին ու պարզևատրել Թումանյանի մահվան 100-

ամյակի և թանգարանի հիմնադրման 70-ամյակի առթիվ թողարկված մեդալով:

Մարինա Բաղդասարյանը տպավորված պատմում է, որ միջոցառմանը ներկա է եղել Թումանյանի կրտսեր որդու՝ Արեգի ծոռը՝ մեծ բանաստեղծի կոռը՝ Ամալյա Յաստրեբովան, որը հիացած բացականչել է. «Ինչ-



քա՜ն նոր բան իմացա այս այցի շնորհիվ: Շնորհակալություն»:

Երկրորդ օրը հյուրընկալվեցին Ռուսաստանի հայերի միության կիրակնօրյա դպրոցի և գրական խմբակի կողմից: Այստեղ բոլոր հանդիպումները համակարգում էր Տաթևիկ Մաղաթյանը (գրական խմբակի և կիրակնօրյա դպրոցի գործերի համակարգող):

«Գրական խմբակը մեզ համար անակնկալ էր պատրաստել. դա թումանյանական կերպարների համադրությամբ մի պատկեր էր, որով Քաջ Նազարը, Թմկա տիրուհին, Անբան Հուռին, Շունը, Վաճառականը հետաքրքիր ուղերձներ էին հղում մեզ իրենց դերասանական խաղով: Նրանք իրենց «վաստակավոր դերասաններ» էին համարում: Այդ գրական խմբակում չափազանց շատ են հետաքրքրված Թումանյանով:

Երկու տեղերում էլ մեր հանդիպումներն անցել են շատ ջերմ մթնոլորտում,- ոգևորված պատմում է Լ.Ղարախանյանը: -Մշակել ենք պլաններ՝ հետագա համագործակցության համար: Կարծիքներ ենք փոխանակել,

թե Թումանյանի թանգարանն էլ ինչպես կարող է իր ներդրումն ունենալ հայկական համայնքներում հայկականության, թումանյանական արժեքների քարոզման ու տարածման գործում:

Համայնքը կարոտ ու ծարավ է թումանյանական խոսքին, ընդհանրապես մեր ազգային խոսքին: Երջանիկ են, հպարտ, որ չեն ծուլվում, այլ սիրով սպասում են մեր հերթական նախաձեռնություններին: Ունկնդիրների մեջ էին նաև Արցախից բռնի տեղահանված մանկավարժներ, որոնք, անհազ ծարավով, կարոտով ու սպասումով լեցուն, եկել էին՝ մեկ անգամ ևս հաղորդակցվելու ազգային, թումանյանական մնայուն արժեքներին:

Մեզ համար ամենահետաքրքրականն այն էր, որ ՀՀ դեսպանատունը գտնվում է պատմական փառահեղ անցյալ ունեցող Լազարյան ճեմարանի շենքում: Այստեղ են նաև մշակութային կենտրոնը, որը ղեկավարում է Վլադիմիր Ռուբենի Գաբեն, և հայագիտության ամբիոնը, որ ղեկավարում է Բ.Գ.Բ., դոցենտ Աիդա Մարանջյանը:

Մտահոգող խնդիրն այն է, որ Լազարյան ճեմարանը՝ որպես գիտակրթական կենտրոն, մեկուսացված է աշխարհի մյուս գիտակրթական կենտրոններից ՌԴ-ի դեմ սահմանված պատժամիջոցների պատճառով,- իր խոսքն այսպես ավարտեց թանգարանի տնօրենը՝ ներկայացնելով այն շնորհակալագիրը, որով պարզևատրվում է Հովհաննես Թումանյանի թանգարանի կոլեկտիվը՝ Ամենայն հայոց բանաստեղծի գրական գործունեության և ազգային-հումանիստական ժառանգության պահպանման և հանրահռչակման գործում ունեցած մեծ ավանդի համար:

Շնորհակալագիրը տրվել է Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Արամյանի կողմից:

Սուրյա ՂԱԶԱՐՅԱՆ

ԿՐԹԱՄԱՐՁԱԿԱՆ

ԲԱՐՁՈՒՆԷՔԻ ԱՐԱՇԵՏԸ

Համատեղ մտազործունեության արդյունքում մենք ծնակերպում ենք Հայոց երկրի տեսլականը, առաքելությունն ու նպատակները, որոնք ընկալելի և ընդունելի կլինեն հայ ժողովրդի լայն շերտերի համար:

«ԲԱՐՁՈՒՆԷՔ»

2020թ. Արցախյան 44 օր տևած պատերազմում կրած պարտությունը մեծ ու դառը ծանրություն ու կորուստ էր մեր ազգի հա-

ճանց համար, որոնք հետաքրքրվում են լեռնագնացությամբ: Առաջնության մասնակցությունը պարտադիր 6 հոգուց բաղկացած խմբերով է: 2023-ին «Արահետ»-ի՝ Վայոց Ձորում կայացած առաջնությանը մասնակցել է 10 թիմ՝ 60 հոգի և 34 կամավորական, 2024-ին Գեղարքունիք-Տավուշ մարզերում՝ 20 թիմ՝ 120 հոգի, 40 կամավորական: 2025-ին լեռնագնացությանը մասնակցեց 25 թիմ՝ 150 հոգի: Այս անգամ թիմերը մասնակցեցին շուրջ 11 կմ Մարց-Խաչքար-Սուրբ Սարգիս եկեղեցի-Քարինջի խաչ-Մարց սիրողական և 28 կմ Մարց-Քարինջի Սուրբ Սարգիս եկեղեցի-Եղնախաղաց-Մրցաբար-Դժարասար-Մարց պրոֆեսիոնալ երթուղու հաղթահարելուն:

Ինչպես տեղեկացրեց «Բարձունք»-ի Ան անդամ Գայանե Թունյանը, «Արահետ»-ի կարևոր նպատակներից է հայ մարդուն վերադարձնել լեռները: Առաջին տարիներին առաջնությունը եղել է մեկօրյա, իսկ այս անգամ՝ եռօրյա: Տեղեկացրեց

նաև՝ առաջնության անցկացմանը հետևում են երթուղիներում հերթապահող կամավորականներ, որոնք դրոշակներ են տրամադրում իրենց մոտով անցնող թիմերին: Այդ պահին ծրագրի ղեկավար Միեր Սանոսյանն ու Ալեքս Մելիքյանը տարածքում հսկում էին շուրջ 70 կամավորների աշխատանքը: Բացի դրանից՝ թիմերն ունեն կապի միջոցներ, իրենք էլ հետևում էին նաև համացանցով: Իսկ սիրողական, թե պրոֆեսիոնալ երթուղիներն ընտրում են թիմերը՝ նախապես գրանցվելով:

Ձրույցի ընթացքում վերադարձան նաև պրոֆեսիոնալ երթուղին առաջինը հաղթահարած «Խարույկ» թիմի անդամները՝ Սևադան, Արան, Վարդանը, Սիմոնը, Արարատը, Հովհաննեսը: Թիմի անդամները գոհ էին. կայացել էր թիմային անցում: Երկրորդը պրոֆեսիոնալներից տեղ հասավ «Թրայ Քլաբի համեստներ», իսկ երրորդը՝ «North Peak Mountain Club» թիմերը: 28 կմ երթուղի անցած Մերի Մխիթարյանն ու Ռիմա Կաթրի-ելյանը, չնայած հոգնածությանը, երջանիկ էին. թիմակիցների հետ հաղթահարել էին լեռնային դժվար ճանապարհը, կարողացել էին կողմնորոշվել անտառում: «North Peak Mountain Club»-ի ֆեյսբուքյան էջում, որպես հետաքրքիր փաստ, նշված է. «Արդեն երկրորդ տարին է, ինչ մրցանակային եռյակի թիմերից միայն մեր թիմում կան աղջիկներ: Մեր ակումբի թիմն այս պահին միակն է, որը 3 առաջնությունների ընթացքում տեղ է գրավել մրցանակային եռյակում: Նա-րեի և Սարգսի ջանքերով 3-րդ (էլի երրորդ) տեղն ենք գրավել նաև հրաժարության մրցույթում»: Պրոֆեսիոնալ երթուղին 4-րդը հաղթահարեց «Ազատագեն» թիմը: Իրենց ֆեյսբուքյան էջում գրել են. «5 ժամ 5 րոպեում հաղթահարելով 28կմ երկարությամբ երթուղի՝ մենք զբաղեցրել ենք 4-րդ հորիզոնականը: Առաջնությունը լավ հնարավորություն էր մարզվելու, կոփվելու և զարգացնելու թիմային աշխատանքը: Շնորհակալ ենք մեր գործընկեր «Արահետ»-ին՝ նման նախաձեռնության համար: Շնորհավորում ենք բոլոր հաղթանակած թիմերին: Մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերն ստացել են «Ազատագեն»-ի ծառայություններից օգտվելու նվեր քարտ»: «Բարձունք»-ի համահիմնադիր Տիգրան Արեգունին կարևորեց իրենց կառույցի դերը որպես կրթական կամավորական շարժում, որի նպատակն ու առաքելությունն է լուսավորել երկիրը՝ կրթելով, համախմբելով ու արարելով: «Նշված 3 բաղադրիչներով բխեցնում ենք մեր ծրագրերը: «Արահետ»-ը դիտարկում ենք որպես կրթական ծրագիր, որն իր մեջ ներառում է հայրենաճանաչողություն, ֆիզիկական պատրաստություն, քարտեզագիտություն և ամենակարևորը՝ թիմային մտածողություն», հավելեց Տ. Արեգունին: Շնորհակալություն հայտնեց աջակից ու համագործակցող կառույցներին՝ Վանաձորի ՈՍԱ-ին, որ ճամբարում իրականացրել է «Թիրախային խոցում» մրցույթը, առաջնության մասնակից ու աջակից «Ազատագեն»-ին՝ դարձյալ մրցույթի կազմակերպիչ, որը հաղթող թիմերին նաև նվեր-քարտեր է հատկացնելու, «Վարդ Վարենկին», որ իրականացրել է մշակութային ծրագիր, «Իրական դպրոց»-ին, որից երեք թիմ՝ Երևանից, Իջևանից ու Վանաձորից, մասնակցում էին առաջնությանը, «Կարապ» հավելվածին՝ աուդիո գրքերի տարեկան բաժանորդագրություն կատարելու համար: Նշեց նաև՝ իրենց հետ են ՀՀ ՆԱԿ ոստիկանության ու փրկարար ծառայության ներկայացուցիչներ: Ճամբարում գործում էր նաև բժշկական ու առաջին բուժօգնության ծառայություն: Յուրաքանչյուր թիմ ուներ հատուկ պայուսակ՝ նախատեսած առաջին օգնության համար: Ձրույցի նաև ծառայություն կատարող

ոստիկանների հետ: Ալավերդու բաժանմունքի համայնքային ոստիկան, ոստիկանության լեյտենանտ Արտակ Ծատիսյանն ասաց՝ ողջ գիշերը տեղում են եղել: Նրա հետ էր ոստիկանության կրտսեր-սերժանտ Դավիթ Պարանյանը: Ասացին, որ հետաքրքիր ու կարևոր միջոցառում է: Երեկոյան ճամբարում կայացավ համերգ՝ Վահագ Ռաշի և Լիլիթ Պիպոյանի մասնակցությամբ:



մար: Նույն պատերազմի մասնակից ու ողջ մնացած շատ երիտասարդների համար այդ պարտությունը նաև մեծ դաս էր: Եվ 2020-ի վերջին նրանցից ոմանք ՀՀ տարբեր մարզերում, հիմնականում Երևանում ստեղծեցին ռազմահայրենասիրական, ռազմամարզական, կրթամարզական հասարակական կազմակերպություններ, դպրոցներ, որոնց նպատակն է հայ երեխաներին, երիտասարդներին, ինչու չէ, նաև տարեցների պատրաստել դիմակայելու ցանկացած դժվարության, լինել միասնական, ճանաչել հայրենիքը, բնությունը և այլն: Նման կազմակերպություններից է «Բարձունք»-ը, որի հիմնադիրներ Գեղամ Օհանյանը, Հայկ Նավասարդյանը և այլք նույնպես մասնակցել են պատերազմին: Հինգ տարիների ընթացքում «Բարձունք»-ը տարբեր ծրագրեր է իրականացրել ու շարունակում է: Սակայն ՀՀ-ի կարևոր ծրագրերը նախատեսված են 20 տարվա համար:

Հունիսի 21-22-ին ՀՀ Լոռու մարզի Մարց գյուղում «Բարձունք»-ն իրականացրեց «Արահետ»՝ արդեն երրորդ հայրենաճանաչ լեռնարշավային առաջնությունը: Հունիսի 22-ին տեղում՝ վրանային ճամբարում, ծանոթացա «Արահետ»-ի 2025թ. իրականացված և շարունակվող ծրագրին: Ձրույցի «Բարձունք»-ի առաջնորդող խորհրդի(ԱԽ) անդամների՝ Գեղամ Օհանյանի, Տիգրան Արեգունու, Գայանե Թունյանի, ինչպես նաև ծրագրի մասնակցող թիմերի անդամների հետ:

Գ. Օհանյանը տեղեկացրեց, որ 2025-ին «Արահետ» ծրագրին մասնակցում է 25 թիմ, որոնցից որոշները՝ արդեն երրորդ անգամ: Հավելեց նաև՝ եթե անցած տարիներին ծրագրին մասնակցել են հիմնականում արշավական, ռազմամարզական ու նման կառույցների թիմեր, այս տարվա կարևոր հաղթանակներից է, որ ծրագրին մասնակցում են նաև դպրոցներ, սփյուռքահայեր և այլք: Ի՞նչ ծրագիր է «Արահետ»-ը հարցին՝ պատասխանն է. «2023թ. առաջին անգամ իրականացված «Արահետ»-ը լեռնարշավային ամենամյա առաջնություն է, որի նպատակն է զարգացնել լեռնագնացության մշակույթը բնակչության շրջանում: «Արահետ»-ը նախատեսված է 16 տարին լրացած բոլոր ան-

Երթուղու ամենաբարձր կետը Գուգարաց լեռների արևմտյան ճյուղավորություններից 15կմ երկարությամբ Սևորդյաց լեռնաշղթայի Դժարասար գագաթն է՝ 2245մ բարձրությամբ: Տեղեկացրեց նաև՝ սիրողական երթուղու մասնակից թիմերից արդեն կան վերադարձողներ: Առաջին տեղում է «ArmGeo Runners», 2-րդում՝ «ՋԱՐԿ», իսկ 3-րդում՝ «Սերաստացիներ» թիմերը: Տեղեկացրեց նաև՝ հաղթող թիմերին հատկացվելու են գործընկեր camp.am-ի նվեր-քարտեր, որոնցով կարող են հատուկ խանութից գնել արշավային պարագաներ: Պրոֆեսիոնալների համար նախատեսված է. առաջին տեղ՝ 1,000,000, երկրորդ տեղ՝ 800,000, իսկ երրորդ տեղ՝ 500,000 ՀՀ դրամ: Սիրողական երթուղու հովանավորն է «Ամրոց» հիմնադրամը: Առաջինը հաղթահարող թիմն արժանանում է 400,000, երկրորդը՝ 300,000, երրորդը՝ 200,000 ՀՀ դրամ գումարի նվեր-քարտ: Յուրաքանչյուր մասնակից թիմ առաջնության համար վճարելու է մասնակցության գումար: Իրենց հետ համագործակցում են ու առաջնությանը մասնակցում «Ազատագեն»-ը, «Խարույկ»-ը, «Վարդ վարենկ»-ը, ՈՍԱ-ն և այլ կառույցներ:



Ճամբարը նաև առիթ էր, որ Մարցի բնակիչներն իրենց արտադրած գյուղմթերքի որոշ մաս կարողանան վաճառել, հյուրասիրել: Առաջնության մասնակից «Լավաշ տուր»-ի ֆեյսբուքյան էջում կարդում ենք. ««Բարձունք» ՀՀ-ն վաղուց սովորել է շատերիս հավաքել զաղափարի շուրջ, թիմի շուրջ, ու այդ եռուզեռի մեջ տալ յուրաքանչյուրիս այդ շղթայի մեջ կարևոր օղակ լինել զգացողությունը... Եվ @arahet_bardzunk-ն այդ կրթական փայլուն նախագծերից մեկն է, որտեղ, այս տեխնոլոգիական ժամանակաշրջանին ի հակադրություն, սովորում են լինել բնությանն ու մարդուն ավելի սերտ, ճանաչել հայրենիքը կենացներից ու ճառերից դուրս, իրական ու մոտիկ: Շնորհակալ ենք @arahet_bardzunk-ի կամավորներին ու



հովանավորներին, բոլոր մասնակից թիմերին, ԱԽ-ի ու ոստիկանության աշխատակիցներին, տեղացիներին՝ ֆանտաստիկ հյուրասիրության համար, և բոլոր բոլորին, ովքեր թեկուզ մի փոքր ներդրում են ունեցել այս զաղափարի իրականացման համար»:

«Արահետ»-ի ֆեյսբուքյան էջում երրորդի մասին գրված է. «Շուրջ 300 զաղափարակիցներ մեկ վայրում... մեր հայրենիքի հյուրընկալ գրկում՝ Մարցում «Արահետ-2025»-ն այլևս իրողություն է... Այս լեռնարշավային պատմությունը կերտեցինք բոլորս՝ մասնակիցներ, կամավորներ, գործընկերներ, մարցեցիներ ու աջակիցներ... «Արահետ»-ը համախմբման, հաղթահարման և հայրենիքը նորովի բացահայտելու մեր ճանապարհն է, բոլորիս հաղթանակն է: Չէ՞ որ բարձունքները միասին են նվաճվում»:

Ջոհրաբ ԸՈՋՈՑԱՆ

ՈՒՆԱԳԵԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԱՎԱՆՂՈՒՅԹ

Հունիսի 14-ը, ըստ Վիկտոր Համբարձում-
յանի տուն-թանգարանի նախկին տնո-
րեն, երջանկահիշատակ աստղագետ և տոմա-
րագետ Գրիգոր Բրուտյանի, Հայոց հին Նոր
տարին է: Աստղագետի համոզմամբ՝ հին հայ-
կական օրացույցն ունե-
ցել է 300 օր՝ 10 ամիս,
յուրաքանչյուրը՝ 30-ա-
կան օրով: Իսկ մեր նախ-
նիները տարվա սկիզբը
նշել ու տոնել են ամա-
ռային արևադարձից 8
օր շուտ՝ հունիսի 14-ին:
Այդ օրը կայացել է նաև
մեծ ուխտագնացություն
դեպի Արագած լեռ, որ-
տեղ տոնական արարո-
ղությունները շարունակ-
վել են մեկ շաբաթ:



2025թ. հունիսի 14-
ին, արդեն 19-րդ անգամ, «Հանուն հայրենիքի»
հայրենասիրական հասարակական կազմա-
կերպությունը շարունակեց Գրիգոր Բրուտյանի
նախաձեռնությունը. իրականացրեց տոնական
ուխտագնացություն նախնայաց ճանապարհով
դեպի Արագած լեռ: Ավանդության համաձայն՝
ուխտագնացությունը, որին մասնակցում են
աստղագետներ, տոմարով զբաղվողներ, մշա-
կույթի գործիչներ, զինվորականներ, երիտա-
սարդներ և այլք, սկսվում է Երևանից: Ուխ-
տագնացների առաջին կանգառը Արագածոտ-

Ուխտագնացների հաջորդ կանգառը Հայոց
հնագույն Ամբերդ ամրոցում էր, որտեղից էլ
սկսվեց դեպի Արագածի հարավային գագաթ
արշավը: Մեր, ինչպես ասում է Ավետիք Իսա-
հակյանը, Ալմաստ-վահան լեռան հարավային
լանջին, ծո-
վի մակար-
դ ա կ ի ց
3200 մ
բարձրու-
թյան վրա է
Քարե լիճը,
որի հարա-
վ ա յ ի ն
ափին է
գ տ ն վ ու մ
խորհրդա-
յին տարի-
ներին հիմ-
նած ֆիզի-

կայի գիտահետազոտական կենտրոնի բազայի
վրա գործող Արագած տիեզերական ճառա-
գայների հետազոտական կայանը: Այն 1942-
43թթ. հիմնել են Արտեմ և Աբրահամ Ալիսան-
յան եղբայրները: Կայանի տարածքում տե-
ղադրված է հազարամյա վիշապաքար, որի
մոտ կայացավ Հայոց նավասարդյան տոնին
նվիրված միջոցառում: Ներկաները զինով
շնորհավորեցին միմյանց: «Հանուն Հայրենի-
քի» ՀՀԿ նախագահ Ներսես Ներսիսյանը, որը
ծրագրի հիմնական հեղինակն ու կազմակեր-
պիչն է, իր ելույթում կարևորեց այս
միջոցառումը հատկապես երիտա-
սարդ սերնդի համար: Դիմելով ներ-
կաներին ասաց. «Այս տոնակատա-
րությունը բարձրացնում է մասնակից-
ների ռազմահայրենասիրական ոգին՝
դառնալով հայ հնագույն մշակույթի
քարոզչության միջոց»: Եղան այլ
ելույթներ ևս: Ներկա ֆիզիկոս գիտ-
նականներից մեկը ներկայացրեց մի-
լիոնավոր տարիներ առաջ երկրի վրա
տեղի ունեցած ֆիզիկական երևույթ-
ների մասին:

Ուխտագնացությունը եզրափակվեց Ամ-
բերդ ամրոցի տարածքում կայացած հանդի-
սավոր միջոցառմամբ: Ընդհանրապես յուրա-
քանչյուր ուխտագնացությանը մասնակից են
եղել մշակութային խմբեր, անհատ երգիչ-կա-
տարողներ: Այս անգամ հանդիսավոր միջո-
ցառման ժամանակ հանդես եկավ «Արցախի
այաներ» համույթը՝ Սուսաննա Ավարյանի
գլխավորությամբ:

Արդեն մթնշաղ էր, որ ուխտագնացները
հրաժեշտ տվեցին Ամբերդին՝ շնորհակալու-



թյուն հայտնելով կազմակերպիչներին: Ոգևոր-
ված ու զոհ էին «Արցախի այաներ» համույթի
անդամները, որ իրենց տնից բռնի տեղահան-
վելուց հետո Մայր հայրենիքում կարողանում
են համախումբ լինել նման միջոցառումներին
մասնակից լինելով: Իսկ Արագած լեռն ու Ամ-
բերդի անկրկնելի գեղեցկությունը հմայել էր
նրանց:

Ն. Ներսիսյանը նշեց՝ հունիսի 21-22-ին այ-
ցելելու են Գառնի՝ դիմավորելու Արևադարձը:

Ջոհրաբ ԸՆԹՈՑԱՆ

Շնորհանդես

«ԱՍԿԵՐԱՆ. ՀՈՒՇԱՊԱՏՈՒՄ- ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ». ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ

Եթե հիշողությունն արթուն է,
ապա հայրենի եզերք վերա-
դարձը կլինի անկասելի:

Թերևս այս նվիրական երազանքի
մղումն էր ասկերանցիներին հավաքել
մի հարկի
տակ՝ մաս-
ն ա կ ի ց
դառնալու
աղոթքի ու
մայրական
սիրո լեզ-
վով գրված
Վերա Գաս-
պարյանի
«Ասկերան.
հուշապա-
տում-տա-
ր ե գ Ր Ո Ւ Ն »

գրքի համալրված տարբերակի շնոր-
հանդեսի:

Բացման խոսքով հանդես եկավ Ար-
ցախի ժուռնալիստների միության նա-
խագահ Կիմ Գաբրիելյանը, որի աջակ-
ցությամբ իրականացել է Վերա Գաս-
պարյանի և գրքի խմբագիր Անահիտ
Պետրոսյանի
մեծ երազան-
քը՝ գրքի վե-
րահրատարա-
կումը լրամշակ-
ված տարբերա-
կով:

Հուշապա-
տ ու մ - տ ա -
ր ե գ Ր Ո Ւ Ն ը
արիության ու
սխառնի իրա-
կան պատմու-
թյուն է՝ նվիր-
ված Ասկերանի քաջարի զավակներն,
որոնք իրենց կյանքը չխնայեցին հանուն
հայրենի հողի ու փառքով պսակեցին
իրենց անունը: «Գիրքը կարևորվում է
նրանով, որ այն դառնալու է հուշարձան՝
ուղղված հետագա սերունդներին,-

րի միության նախագահ Կարմեն Ասլան-
յանի և Ասկերանի քաղաքապետ Հայկ
Համիրյանի հովանավորությամբ: Գիր-
քը յուրահատուկ է նրանով, որ հեղի-
նակն ակնատեսի աչքով տեսածն ու
վերապրածն է նկարագրել: Այն հավա-
քական դիմանկար է մի ամբողջ ժողովու-
րի, որը հո-
ղի մեջ ար-
մատ ունի,
հիշողու-
թյան մեջ՝
ճշմարտու-
թյուն, և
արժանա-
պատվու-
թյան մեջ՝
պայքար.
«Որ պ ե ս
խմբագիր
գրքի հետ
աշխատե-
լիս գի-
տակցել են՝
մենք չենք
գրում անցյալը,
մենք ապրեցնում ենք
այն: Այն ունի իր
կյանքը, իր ճակատագիրը, իր պայքա-
րը, ինչպես և մեր հերոսները: Ու քանի
հերոսնե-
րը մեր
սրտերում
են, մեր
հիշողու-
թյան մեջ,
նրա մեջ
չեն մա-
հ ա ն ա -
լու»:

Ասկե-
րանի շրջ-
վ ա Ր Ջ Ա -
կ ա զ մ ի
դեկավար Համլետ Ապրեսյանը ցավով
նշեց, որ իր պարտականությունները
կատարում է հայրենիքից դուրս: Միակ
մխիթարականն այն է, որ գոհված ազա-
տամարտիկների հիշատակը հարգելու
տեղը մնացել է Եռաբլուրը, որտեղ հա-
ճախ են հավաքվում: Նա
պատրաստակամ է իր աջակ-
ցությունը բերել հետագա բո-
լոր նախաձեռնություններին:
Կոչ արեց չկոտրվել, հա-
մախմբվել ու միասնաբար լու-
ծել այս դժվարին կացության
մեջ գտնվող հայրենակիցների
խնդիրները:

Պատմաբան Բելլա Բաբա-
յանն անդրադարձավ այն իրա-
կան գտնվում ենք բոլորս:
Նրա կարծիքով՝ ճշմարտության մասին
եթե չեն խոսում կամ կիսատ են խոսում,
ապա այդ ճշմարտության հարթակը լց-
վում է հակաճշմարտությամբ. «Ո՞վ կա-
րող էր պատկերացներ ամենաշար երա-
զում անգամ, որ արցախցին կարող էր
դառնալ փախստական իր իսկ հայրենի-
քում: Անընդհատ պետք է խոսել նման
փաստերի մասին, որոնք ապագայում
անհրաժեշտ են լինելու սերունդների
համար: Չպետք է հուսահատվել, և բոլո-
րիս սուրբ երազանքը՝ վերադարձը,
միշտ աչքի առաջ ունենալ»:

Բոլոր արտահայտվողները շնորհա-
կալություն հայտնեցին գրքի հեղինակ
Վերա Գասպարյանին, որը, առողջական
խնդիրներով պայմանավորված, բացա-
կայում էր և աջակցողներին:




նշում է Կիմ Գաբրիելյանը,- չեն կարող
որևէ կոնկրետ բան ասել մեր վերադար-
ձի մասին, բայց կասեմ՝ հրաշքներ միշտ
էլ լինում են, ինչպես որ երբևէ մեր
մտքով չէր անցնի, որ այսօր կհայտն-
վեինք այս իրավիճակում: Մի բան միայն
լավ պիտի հիշենք՝ վերադարձ լինելու է,
չկորցնենք մեր հույսը»:

Նա առաջարկեց ՀՀ-ի նման մի կա-
ռույց ստեղծել՝ համախմբելու մեր հայ-
րենակիցներին՝ ինչ-որ ձևով աջակցե-
լու, օժանդակելու նրանց որոշակի
խնդիրները լուծելու գործում:

Գրքի խմբագիր Անահիտ Պետրոս-
յանն իր ելույթում ընդգծեց այն հանգա-
մանը, որ գրքի առաջին տարբերակի
տպագրությունն իրականություն է դար-
ձել 2022 թվականին Արցախի ժուռնա-
լիստների միության նախագահ Կիմ
Գաբրիելյանի, Պահեստազորի սպանե-

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

«ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԳԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ» ԳՐԺԻ ՀԵՌՈՐՀԱՆՈՒՄԸ



Mediahub.am-ի հետ կայացած հարցազրույցներից մեկում Դվինի հնագիտական, Արցախի Տիգրանակերտի հնագիտական արշավախմբի ղեկավար, պ.գ.դ., պրոֆեսոր Յանլետ Պետրոսյանն իր վրդովմունքն ու զարմանքն է հայտնել այն փաստի առթիվ, որ Հայաստանը միտումնավոր դուրս է մղվում տարածաշրջանի մշակութային, գիտական գործընթացներից: Դրա վառ ապացույցն է «Քաղաքներ սահմանի վրա. ուշ անտիկ ուրբանիզացիայի ուսումնասիրությունը Հարավային Կովկասում մ.թ. 300-600-ականներին» խորագրով կայանալիք գիտաժողովին մեր երկրին մասնակցության հրավեր չուղարկելը:

Կազմակերպիչներն ամտեսել են տարածաշրջանի քաղաքակրթությունում դերերի ի վեր անջնջելի հետք թողած հայկական մշակույթի և հայ մասնագետներին:

«Որպես կանոն՝ այդ գիտաժողովները հիմնվում են գիտական թեմատիկայի վրա: Գիտությունը չի կարելի խամռել քաղաքականության հետ: Դրանով ակնհայտորեն մերժվում է քաղաքակրթությունը: Գիտական հանրույթը չպետք է նման մոտեցում ցուցաբերի: Գիտնականին հատուկ պիտի լինի գիտական, ակադեմիական բարեվարքությունը:

Քաղաքական սահմանները, քաղաքական փոխհարաբերությունները սովորաբար հաշվի չէին առնվում նման գիտաժողովների ժամանակ: Միտումնավոր կերպով ընդհանուր գիտական օբյեկտից հանել գիտական հետազոտության մի մասը, տվյալ դեպքում՝ հայկականը, հայկականությունը, ուղղակի անհեթեթություն է: Չնոռանա՞նք, որ եղել են գիտաժողովներ զուտ հայկական մշակույթին, քաղաքակրթությանը նվիրված»:

Պրոֆեսորն իր խորը հիասթափությունն է արտահայտել գիտական աշխարհում տիրող նմանօրինակ շերտավորումների ու անտեսումների համար: Միջազգային հայտնի հետազոտողների կողմից նման վերաբերմունքը շատ անհասկանալի է, ընդգծել է գիտնականը:

ՀՀ ՊԱՍ նախագահության կողմ դափնի-
ծում օրերն կայացած «Հայոց ազգագրու-
թյան թանգարանի գորգերի ընտրանի» գր-
քի շնորհանդեսը կարծես վերոնշյալի ամ-
բողջական պատասխանը դարձավ:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը, որի գլխավոր առաքելությունն է

միավորել հայագիտության և հարակից ոլորտների մասնագետներին ռազմավարական ուսումնասիրությունների շուրջ, այս անգամ ևս պատվով կատարեց իր վեհ առաքելությունը. հիմնադրամի մասնակցությամբ ու աջակցությամբ իրողություն դարձավ հերթական ազգանվեր քայլը՝ տպագրվեց «Հայոց ազգագրության թանգարանի գորգերի ընտրանի» քառալեզու գիրքը (հայերեն, ռուսերեն, անգլերեն և թուրքերեն):

Շուրջ չորս դար ներառող և գորգերի ավելի քան 120 տիպ պարունակող Հայոց ազգագրության թանգարանի (ՀԱԹ) այս հավաքածուն ունի պատմամշակութային բացառիկ նշանակություն՝ ներառելով 17-19-րդ դարերով թվագրվող նմուշներ, հայտնաբերված թվաթիվ հիշատակարաններով գորգեր:

Առավել հարուստ ու ամբողջական են

Ներկայացված Արցախի, Սյունիքի, Լոռի-
Գուգարքի, Ուտիքի ու Տավուշի, Վասպու-
րականի, Խոյ-Սալմաստի, Հարավարևել-
յան Կովկասի ու Պարսկաստանի, Ուրմիա
լճի ավազանի գորգագործական հայաշատ
կենտրոններին պատկանող գորգերը:

«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի հետազոտող-վերլուծաբան, պ.գ.թ., ղոցենտ Գոռ Մարգարյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ նման աշխատանքները հայագիտության ոլորտում պետք է կատարել միմյանց հետ համագործակցելով՝ նկատի ունենալով մեր հարևանների՝ ընդգծված հետևողականությամբ ու պարբերականությամբ կատարվող հայկականության յուրացման և աղավաղման գործոնը:

Գորգագործության հետքը
Հայաստանում դիտարկվում է
վաղ անցյալից ու փաս-
տագրված է միջնադարի պատ-
կերագրության ու արձանագիր
աղբյուրներում և պատմական
սկզբնաղբյուրներում:

Հայկական գորգերի որակական ու արտաքին գեղագիտական առանձնահատկությունների մասին վկայում են արաբ պատմիչներից մինչև ուշ միջնադարի և նոր ժամանակների եվրոպական, ռուսական և այլ օտար աղբյուրներ: Գորգագործությունն ուղղակի նյութական հնարավորությունների արդյունք չէ, այլ մշակութային ինքնու-

թյան, ավանդույթի, կաղապարների, պատկերային ու խորհրդանշական համակարգի դրսևորում է:

ՀՀ ՎԱԱ փոխնախագահ, ՀՀ ՎԱԱ թղթակից-անդամ Պավել Ավետիսյանը նշեց, որ այդ աշխատանքը հանրահռչակման նպատակ ունի. «Դրանով մենք լուրջ պայքար ենք ծավալում մեր մշակույթի ուժացման, յուրացման ու աղավաղման դեմ: Մենք այդ գործով պատասխան ենք տալիս մեր մշակույթը մեզնից գողացողներին»:

Հավաքածուի համահեղինակ, Սարդա-
րապատի հերոսամարտի հուշահամալիրի
Հայոց ազգագրության և ազատագրական
պայքարի պատմության ազգային թանգա-
րանի տնօրեն, պ.գ.թ. Կարեն Փաիկյանյա-
նը, կարևորելով ՀԱՅ-ի և «Գեղարդ» հիմ-
նադրամի համատեղ աշխատանքը,
ընդգծեց, որ ներկայացվող գործը նոր
խոսք է հայագիտության, մշակութաբանու-

թյան, արվեստաբանության մեջ. այն 47 տարվա տքնաջան աշխատանքի արդյունք է:

Առաջին անգամ ներկայացվում են հայկական գորգերը ըստ չափարիագրության, ըստ ժամանակագրության, ըստ տեխնիկական տեխնոլոգիաների ու նաև պատկերազարդման համակարգերի։ Ազգագրության թանգարանն ընդգրկում է 2002-նմուշ, որից ընտրված են 700 գորգեր։ Աշխատանքի եզակիությունն այն է, որ ասելիքն ընդգրկում է և մեծ հանրության համար նախատեսված։ Ակնկալում են հասարակության բարձր գնահատականք։



Հավաքածուի մյուս համահեղինակը՝ պ.գ.թ. Աշխուհ Պողոսյանը, մեեց, որ աշխատությունը ստեղծվել է՝ կանգնեցնելու այն հաղթարշավը, որն իրականացնում են մեր հարևանները մեր մշակույթի յուրացման գործում. «Հասել է մեր հաղթանալու սկսելու ժամա-

նակը: Դրսում ընդհանրապես քիչ են հայկական գորգ ասողները: Պետք է գործի անցնել»: «Սա այն շտեմարանն է, որ մենք տալիս ենք մասնագետներին և հետաքրքրվողներին՝ ասելու, թե ինչպիսի պատմամշակութային ժառանգություն ունենք մենք, և մեր հարևանն իմանա, որ իրենց կեղծիքին պատասխանող կա, և դեռ շատ են լինելու».- իր խոսքն այսպես ավարտեց Աշխունց Պողոսյանը:

Աշխատության երրորդ համահեղինակ Ավետլանա Պողոսյանն էլ ավելացրեց, որ գործը եղել ու շարունակում է մնալ հայկական ազգային ինքնության կարևորագույն դրսևորումներից մեկը՝ ունենալով ոչ միայն կիրառական, այլև ծիսական ու պաշտամունքային նշանակություն: Նա ուրախ է, որ ամբողջ թիմով կարողացել են ստեղծել մի աշխատություն, որում պատշաճ կերպով ներկայացված են հայկական գորգարվեստի բացառիկ նմուշները՝ դարձնելով դրանք հետագա սերունդների սեփականություն:

Արտահայտվողների խոսքում առկա է այն մտահոգությունը, որ Հայաստանում պակասում է պետական հոգածությունը մշակութային այս նմուշների հանդեպ, և որպես օրինակ՝ նշվում է 2020 թվականից առաջ տեղի ունեցած մի դեպքի մասին:

Աղրբեջանի թանգարանի աշխատակիցները, համագործակցելով Ֆրանսիայի դեսպանատան, Լուվրի թանգարանի հետ, հայկական գորգերը տեղափոխում են Աղրբեջանի թանգարան և ներկայացնում դրանք որպես աղրբեջանական: Դրանից հետո էլ երբեք ոչ մի անգամ այդ կեղծարարությունը չի լուսաբանվել հայկական ոչ մի մամուլում:

Ազգագրագետ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ. Մխիթար Գաբրիելյանը, շնորհավորելով այդ նոր նախաձեռնության հեղինակներին ու կազմակերպիչներին, կարևորեց նոր հավաքածուն, որն աշխարհին հասկանալի լեզվով ներկայացնելու է հայոց մշակութային ժառանգության բացառիկ նմուշները, նրանց իրական հեղինակներին: Դա սոսկ աշխատություն չէ, այլ մեր մշակութային ժառանգության մասին կարևոր վկայություն: Նա առաջարկեց գիրքն առաքել բոլոր այն կառույցներին ու կազմակերպություններին, որոնք լիազորված են ճշմարտությունը բարձրաձայնելու աշխարհին, որոնք Հայաստանը ներկայացնելու պատասխանատվություն ունեն:

Պատմության ինստիտուտի աշխատակից պ.գ.թ. Սիեր Հարությունյանի կարծիքով՝ աշխատությունը ճշմարտության բացահայտման և այն գիտական լայն հանրությանը հասցնելու միջոց է. «Գիրքը գիտաքաղաքական, ճանաչողական լայն ընդգրկում ունի: Ողջունելի է Ազգագրության թանգարանի և «Գեղարդ» հիմնադրամի նախաձեռնությունը հավաքածուի հրատարակման գործում»:

Թող վարակիչ լինեն նման նախաձեռնություններից ոչ ուրիշներում:

Հավաքածուն պարզաբանելու է մասնագիտական շրջանակներում գորգերի ծագումնաբանության ու էթնիկ պատկանելության հետ կապված առկա որոշակի շփոթոթյունները:

ՍՈՒՐԱՅԻՆ ԴԱԶԱՐՅԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԻՄ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ը

Մաս 1.



Մեզամից յուրաքանչյուրն ունի իր սեպտեմբերի 19-ը՝ անկախ այդ օրը գտնվելու վայրից, տարիքից, սեռից, մասնագիտությունից, սոցիալական դիրքից: Բազմաթիվ են 2023թ. սեպտեմբերի 19-ին Արցախի դեմ սանձազերծված ագրեսիան ու դրա հետևանքները կրած ականատեսների հոգեցունց պատմությունները: Շատ են նաեւ այն պատմությունները, որոնք դեռ չեն վերհանվել կամ գերադասվել է դրանց մասին չխոսել: Որ լռելը չդիտարկվի որպես համաձայնության նշան, ավելի շատ պետք է բարձրաձայնվի յուրաքանչյուրիս «սեպտեմբերի 19-ը» եւ գիտակցվի, որ ամենքս մասն ենք հազարավոր ծալատագրեր խեղած, մեզ անունն ու անհայրենիք դարձրած ահավոր ու անարդար փաստի, որ ցեղասպանություն է կոչվում, եւ որի հետ չի կարելի համաձայնվել:

2023թ. չարաքաստիկ սեպտեմբերին ես էլ, ինչպես իմ հայրենակիցները, դեռ ապրում էի իմ հայրենիքում, հայրենի Ստեփանակերտում: Ոչ շատ հեռու անցյալում վատահ էի, որ Ստեփանակերտը աշխարհում ամենաանվտանգ վայրն է: Չնայած նրան, որ միշտ օդից կախված էր պատերազմի վտանգը, հայրենի քաղաքում ապահով էինք զգում մեզ: Կարելի էր չկողպել դուռը գիշերը եւ հանգիստ պառկել քնելու: Ամենից շատ սիրում էի Ստեփանակերտի ամառային տաք երեկոները: Քաղաքի կենտրոնական մասում միշտ լսելի էին քաղաքային զբոսայգու ճոճորանների աշխույժ աղմուկը եւ զվարճացող երեխաների, ինչու չէ, նաեւ մեծերի զվարթ ձայները: Մարդիկ դուրս էին գալիս քաղաք եւ ուղղակի վայելում էին մաքուր լեռնային օդն ու միմյանց հետ շփումը: Ես զբաղվում էի արեւելյան մարտարվեստով: Պատահում էր, որ մարզումներս ավարտում էի ուշ երեկոյան, բայց կարող էի հանգիստ քայլելով տուն գնալ՝ չվախենալով ոչ մի բանից: Ես երջանիկ էի իմ ծննդավայր Ստեփանակերտում:

2020թ. սեպտեմբերի 27-ին ամեն ինչ փոխվեց: Թշնամին լայնամասշտաբ հարձակում սկսեց, որը ստացավ 44-օրյա պատերազմ անունը: Արցախը դիմադրեց մինչեւ նոյեմբերի 9-ը, եւ ահա պատերազմը լռեց, պապանձվեցին հրանոթներն ու տանկերը, բայրաքցողներն իրենց բները վերադարձան: Սակայն Արցախի Հանրապետությունը կորցրեց հերոսների արյամբ ազատագրված իր տարածքի 75 տոկոսը: Ստեփանակերտը, որն այն ժամանակ թեպետ սահմանից հեռու էր, պատերազմի օրերին ասես վերածվել էր զանազան ռազմական զենքերի փորձարկման ընդարձակ դաշտի՝ պոլիգոնի: Այն քաղաքը, որը 44 օր շարունակ դիմակայել էր հրթիռային համակարգերի, հրթիռահրե-

տանային զենքերի հարվածներին, նոյեմբերի 9-ից հետո դարձել էր սահմանամերձ: Բայց նույնիսկ 2020թ. 44-օրյա պատերազմից հետո՝ չնայած Արցախի վտանգված ու անորոշ ապագային, չփոխվեց Արցախում ապրելու, հերոսների արյամբ պահած սուրբ հողը շենացնելու շատերիս անսասան կամքը: Մտածում էինք, որ հայրենիքում մնալը արտաքին վտանգի դեմ ամենահզոր զենքն է:

Ծանր ժամանակ էր: Անճանաչելի դարձած Ստեփանակերտում ընթանում էր շինարարություն, քաղաքը վերականգնվում էր, սակայն նույնը չէր կարելի ասել բնակիչների սրտերի մասին: Շարունակվում էին որոնողափրկարարական աշխատանքները՝ օրեցօր ավելացնելով զոհված մեր հայրենակիցների թիվը: Բոլորը տխուր էին: Հաջորդած Փառուխի դեպքերը, հայրենիքը մաս-մաս թշնամուն հանձնելը, ամմարդկային շրջափակումը, մտահոգություն էին առաջացնում արցախյան բոլոր ընտանիքներում: Համառությամբ դիմադրում էինք՝ փորձելով հաղթահարել դժվարությունները, սակայն դժվար էր ապրել բնականոն կյանքով: Կենցաղային կարիքները հոգավ դարձել էր դժվարագույն խնդիրներից մեկը: Փորձում էինք չչեղել մեր կյանքի հունը, բայց, ցավոք, չկար մի այնպիսի ոլորտ, որին չանդադրաճանր դաժան բլուրկային: Շարունակվում էի զբաղվել սիրելի մարզածելով եւ մարզել աղջիկների՝ առողջարար մարմնամարզությամբ, բայց հաճախելիությունը նվազել էր վերջին շրջանում: Աղջիկներն ու կանայք իրենց ռեսուրսները սպառում էին հացի հերթերում, սննդի վաճառքի կետերում եւ ժամանակ ու բավական ենթագիտ չէր մնում մարզումների հաճախելու համար: Ոչ մեկին չէի մեղադրում, քանի որ ինքս էլ նույն վիճակում էի: Շարունակվում էի հողվածներ գրել հարազատ թերթի՝ «Լուսարար»-ի համար, որը չնայած սուղ միջոցներին շարունակվում էր լույս տեսնել՝ թեկուզ ուշ-ուշ ու քիչ քանակով, բայց մոտիվացնելով ու հույս ներշնչելով հուսակտուրության եզրին կանգնած Արցախի բնակչությանը:

Այդուհանդերձ կյանքն Արցախում շարունակվում էր: Շրջափակման սկզբնական շրջանում էլ մարդիկ ուրախանում էին, ծնունդներ ու հարսանիքներ էին տոնում, վայելում էին իրենց համգիստը դեռեւս աշխատող սրճարաններում ու ռեստորաններում:

Ես համոզվում էի սիրելի տղամարդու՝ Արթուրի հետ, որի հետ ծանոթացել էի 2022-ի սեպտեմբերին, երբ դեռ շրջափակում չկար: Արթուրը զինծառայող էր: Ծառայության բերումով հաճախ էր բացակայում քաղաքից, բայց երբ քաղաքում էր լինում, նա էլ ինձ պես սիրում էր մայրաքաղաքի տեսարժան վայրերում լինել: Հատկապես սիրում էինք Ստեփանակերտի մատույցներում գտնվող բարձունքից նայել ու հիանալ մայրաքաղաքի պատկերով: Շատ զույգերի պես մենք էլ ապագայի հետ կապված մեր ծրագրերն ունեինք: Ուզում էինք ամուսնանալ, ապրել Արցախում: Որպես առողջ ապրելակերպի հետեւորդ՝ ուզում էի նրան էլ ներգրավել առողջ լինելու իմ բանաձեւի մեջ. հորդորում էի, որ թողի ծխելը, սնվի հստակեցված ռեժիմով, ավտոմեքենայով շարժվել փոխարինի զբոսանքով: Առողջ ապրելակերպին, իհարկե, կողմնակից էր, բայց վնասակար սովորու-

թյուններից միանգամից հրաժարվել դժվարանում էր: Ասում էր՝ չգիտի, թե ինչ պետք է կատարվի, որ կարողանա թողնել այդ սովորությունները: Այդ ժամանակ չէինք պատկերացնում, որ շուտով հայտնվելու էինք շրջափակման մեջ, վառելիքի պակասության պատճառով ավտոմեքենաները կկանգնեին, դրանց փոխարինելու կգային հեծանիվները կամ ստիպված քայլելը, զբոսանքներին կփոխարինեին հացի հերթերը, սնունդը լիարժեք չէր լինի, իսկ ծխախոտ չլիներու պատճառով մարդիկ ստիպված կլինեին չծխել: Չէի պատկերացնում, որ Արթուրը կդառնա իմ մութ օրերի լուսավոր ընկերը՝ դժվար պահերին միակ օգնողն ու հուսադրողը:

Բլուրկային խորանում էր ու իր խմբագրումներն էր անում մեր առօրյայում: Սննդի ու դեղորայքի սպառման հետ նաեւ մեր անվտանգության զգացումն էր հետզհետե սպառվում: Մենք լցված էինք անորոշությամբ ու տագնապով: Բոլորիս ուղեղները զբաղված էին համապատասխան հացի հայթայթմամբ: Բազմահազարանոց բնակչությամբ քաղաքի հացի փռերը, որոնք զրկված էին մշտական էլեկտրաէներգիայից ու հովհարային անջատումների ռեժիմով էին աշխատում, ի զորու չէին ապահովել բնակչությանը նույնիսկ օրական հացի նվազագույն նորման: Միշտ աղմկուտ քաղաքային շուկան լռել էր: Դատարկ էր: Դեղատներում դեղորայք չկար: Ստիպված էինք ապրել մեկ օրով, որի մեխիզմը սահմանափակվում էր հացի որոնմամբ: Հիվանդանալու իրավունք չունեինք: Բայց մի՞թե կարող էին դիմանալ մարդկանց սրտերը: Պատերազմ ու կորուստ տեսած մարդկանց սրտերը չէին դիմանում հայրենիքի գոյության վրա պատուհասած արիավիրքներին ու անողոք իրականությանը: Արցախի ճակատագրով մտահոգված ու զգայուն սրտի տեր մարդկանցից է նաեւ հայրս:

Հայրս իր ուրույն ներդրումն է ունեցել Արցախյան գոյապայքարում: Լինելով ռադիոէլեկտրոնիկայի ոլորտում բարձրակարգ մասնագետ՝ իր գիտելիքներն է ներդրել դեռ առաջին պատերազմի ժամանակ՝ սկզբում ինքնապաշտպանական ուժերի կազմում նախաձեռնելով եւ պատրաստելով բացակայող կարները նշանակության էլեկտրոնային սարքավորումներ, հետագայում ծառայությունը շարունակելով ՊԲ-ում՝ առկա անհրաժեշտ սարքավորումների պատշաճ աշխատանքն ապահովելու գծով:

Շրջափակման պայմաններում պլանային վիրահատություններն Արցախում վաղուց դադարեցված էին, դեղամիջոցները խիստ խնայողաբար էին օգտագործվում: Իսկ եթե բժշկական այնպիսի միջամտության կարիք կար, որը Ստեփանակերտում չէին անում, խնդիրները կրկնապատկվում էին: Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ գուցե եւ ստացվում էր անհետաձգելի բժշկական միջամտության կարիք ունեցող հիվանդանոցի տեղափոխել Հայաստան, սակայն մեր հայրենակցի՝ Վազիֆ Խաչատրյանի ձերբակալման դեպքը անցակետում տեղիք էր տվել խոր մտահոգվելու եւ դաժան ընտրության առջեւ կանգնեցրել նման վիճակում հայտնված մարդկանց. կամ մնալ Արցախում եւ անհրաժեշտ բուժօգնություն չստանալով՝ մահանալ, կամ դիմել կառույցին, եւ եթե հա-

մաձայնեն տեղափոխել, ապա պատրաստ լինել, որ հնարավոր է անցակետում ձերբակալեն:

Հայրս աչքի վիրահատության կարիք ուներ: Բազմիցս դիմել էր աչքի վիրահատության համար, բայց մերժվել էր՝ անընդհատ հետաձգելով: Վերջապես սեպտեմբերի 14-ին հայտնել են, որ քիչ քանակությամբ աչքի վիրահատական պարագաներ են ստացել հիվանդանոցում եւ հերթակառույցում՝ պահպանելով՝ առաջարկել են հորս վիրահատվել: Հայրս ներկայացել է հիվանդանոց, նախնական բուժքննման ժամանակ հայտնաբերել են սրտի իշեմիկ հիվանդություն՝ տարած ինֆարկտի նշաններով, որի ժամկետները համընկել են 2022թ. հոկտեմբերի 6-ի հետ, երբ լսել է, որ ՀՀ վարչապետը Պրահայում ճանաչել է Արցախը Ադրբեջանի մաս: Դիմացել է տան պայմաններում՝ վատ զգացողությունը վերագրելով տեղի ունեցած աղետալի դավաճանական հանգամանքին, որը հղի էր Արցախի կորուստով: Բացահայտված առողջական խնդիրը անհամատեղելի էր աչքի վիրահատության հետ: Նշանակվում է անհապաղ զոնդավորում (կորոնարոգրաֆիա), որը ցույց կտար բուժման հետագա ընթացքը: Օրը նշանակվում է սեպտեմբերի 19-ին:

Շատ մտահոգված էի մի կողմից հորս առողջական, մյուս կողմից՝ մեր եւ ընդհանուր երկրի վիճակով: Անհանգստությունս կիսում էի Արթուրի հետ, նա էլ իր հերթին թեպետ փորձում էր հանգստացնել ինձ, չէր կարողանում թաքցնել, որ վիճակը շատ է լարված, եւ ամեն պահի սպասում են գործողությունների: Երբ մտահոգված հարցնում էի, թե ինչ պետք է անենք, ասում էր, որ ամենքս պետք է անենք մեզամից կախված, եւ ամեն ինչ վստահեմք Աստծուն:

2023 թվականի սեպտեմբերի 19-ի երեքշաբթի օրը դաջվեց իմ եւ մեր հայրենակիցների հիշողության մեջ որպես մղձավանջային օր:

Պետք է պատրաստվեինք հիվանդանոցում անցկացվելիք շրջանին, բայց եղած պայմաններում դա շատ բարդ էր: Նախօրեին մեր շենքի մերձակայքում աշխատող միակ խանութից միրգ էի գնել՝ նուռ, պինդ խմոր, որոնց գների մասին հիշելն անգամ ծանր է: Տան ունեցած բոլոր պաշարները սպառվել էին, ունեինք մի քիչ մեղր, իսկ խմորից ու նռան հատիկներից հյութ պատրաստեցի, որ հիվանդանոց գնալիս վերցնելու բան ունենանք: Սեպտեմբերի 19-ի առավոտյան հայրս ավտոտնակից հանեց վաղուց կանգնեցրած ավտոմեքենան, եղած վերջին բեմգինի կաթիլներով հասանք «Հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ, որտեղ որ պետք է կատարվեր նշանակված հետազոտությունը: Հիվանդանոցում մեզ միացավ հորեղբայրս, իսկ քույրս մնացել էր տանը, որ եղած վերջին այլուրով հասցներ հաց թխել՝ հոսանքի հովհարային անջատումների ու միացումների ընթացքում: Մինչ բժիշկն ընդունում էր հորս ու պատրաստում նրան հետազոտությանը՝ ես ու հորեղբայրս նստել էինք հիվանդանոցի սպասարանում եւ սպասում էինք արդյունքին: Ժամը 11-ի կողմերը լուրեր տարածվեցին, որ դպրոցում գտնվող երեխաներին ապաստարաններ են իջեցնում, հետո տեղեկատվական շտաբը հաղորդեց, հղում անելով ԿԳՄՍ նախարարությանը, որ դպրոցներում դասապրոցեսն ընթանում է բնականոց: Անհասկանալի

էր, թե ինչ է կատարվում: Հիվանդանոցի սպասարանում շատ մարդ կար: Ժամը 12-ի կողմերն էր, երբ սպասարանում գտնվող եւ հավանաբար մեզ նման սպասող զինվորական հազուստով որոշ տղամարդիկ մռայլ դեմքեր ընդունեցին ինչ-որ զանգից եւ արագ դուրս եկան: Դրան հաջորդեց Արթուրի հաղորդագրությունը, որում հայտնում էր, որ չի կարող գալ մեզ մոտ. իրենց էլ են կանչել: Տազնապներին սովոր էինք, բայց այս անգամ այլ էր, շատ անհանգիստ էինք: Չկա ավելի տանջալից բան, քան սպասումի րոպեները, որոնք կարծես ավելի երկար են տևում, քան սովորական ժամանակ: Անորոշությունից ու տագնապից մարդու սիրտ էր դուրս գալիս: 12:50 էր, երբ վերջապես կանչեցին մեր ազգանունը, որ մոտենանք կորոնարոգրաֆիայի բաժին՝ բժշկի հետ խոսելու. հետազոտությունը վերջացրել էին: Ես ու հորեղբայրս մոտեցանք այն պահին, երբ հորս պետք է տեղափոխեին պալատ, իսկ բժիշկը մեզ հետ պետք է խոսեր: Բժիշկ Վարդան Լալայանն ասաց, որ վիճակը բարդ է, անհետաձգելի սրտի բաց վիրահատության կարիք կա, քանի որ կորոնար անոթները 90 տոկոսով փակված էին: Բժշկական նման միջամտություն Ստեփանակերտում իրականացնելը հնարավոր չէր, բժիշկը խորհուրդ էր տալիս տեղափոխել Երեւան՝ Նորք-Մարաշի սրտաբանական կլինիկա: Երբ բժիշկը հայտնեց ախտորոշումը, թվում էր՝ փափուղու առջեւ եմ հայտնվել: Մտքում Արթուրի խոսքերն էին, որ յուրաքանչյուրս պետք է անենք մեզամից կախված եւ վստահեմք Աստծուն: Ինձամից կախված այդ պահին ոչինչ մտքովս չէր անցնում, քան արթերը, որ Աստված ցույց տա ծանապարիք: Եվ ահա պատասխանը չուշացավ... Բայց մի՞թե փրկվելու գինը սա էր... Ի՞նչ արած՝ Աստծո գործունե անքննելի են:

Բարձրագույն պալատ: Մինչ բուժքույրը կաթոցիկն էր միացնում ու պառկեցնում հորս, իսկ մենք մտահոգված քննարկում էինք, թե Երեւան տեղափոխելու անհնարինությունը պայմաններում էինք կարող ենք անել, Ստեփանակերտ քաղաքի մերձակայքում անսպասելի դրդույուն լավեց: Չնայած հայտնի էր, որ շատ լարված է իրավիճակը, ամեն վայրկյան սպասում են ինչ-որ գործողությունների, բայց սովորաբար անսպասելի է սկսվում այն, ինչին սպասում ես:

Պատերազմը սկսվեց կեսօրին, այն ժամին, երբ երեխաները դպրոցում էին՝ թիրախավորելով նաեւ դպրոցներ: Շատ մարդիկ առավոտից ոտքով գնացել էին սնունդ հայթայթելու կամ այլ կենսական կարիքներ հոգալու: Երբ սկսվեց հրթիռակոծությունը, հիվանդանոցում ու քաղաքում քաոս առաջացավ: Բժիշկները մեզ հրահանգեցին իջնել հիվանդանոցի ապաստան, իսկ բուժքույրերը գնացին օգնելու հավանաբար ավելի ծանր հիվանդներին: Թեպետ հորդորել էին հորս երկու ժամ չհարժվել, բայց պետք էր իջնեինք: Հորեղբորս օգնությամբ հազցեցինք նրան, կաթոցիկը ինքնուրույն անջատելով՝ օգնեցինք, որ իջնի աստիճաններով: Պինդ կապված ձեռքը աշխատում էինք հնարավորինս անշարժ թողնել:

(շարունակելի)

Ստյոյա ԱՎԱԳՅԱՆ

ԶԵՆՔ ԶԵՆՔԻ

ԴՈՒՔ ԵՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

Հունիսի 3-ին Երևանում գործող «Հուստ տուն» բարեգործական կենտրոնի տարածքում հերթական ուրախ տրամադրությունն էր տիրում: «Աշխարհն Արցախի երեխաների աչքերով» խորագիրը կրող ցերեկույթն էր՝ կազմակերպված կենտրոնի «Հուստով լի և առողջ մանկություն» տարվա ամփոփիչ ծրագրի շրջանակներում: 30 և ավելի տարիների պատմություն ունեցող «Հուստ տուն» բարեգործական կենտրոնը՝ տնօրեն Մովսես Պողոսյանի գլխավորությամբ, բազում մարդասիրական ու հայրենասիրական ծրագրեր է իրականացրել: Կենտրոնի հոգսերը կրկնապատկվեցին Արցախյան 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի և դրանից հետո Արցախում կատարված տխուր իրադարձությունների հետ կապված: Մինչ այդ էլ կենտրոնի որոշ ծրագրերի շահառուներ էին սիրիահայ փախստականները: «Հուստով լի և առողջ մանկություն» ծրագիրը նպատակ ունի բարելավել Սիրիայից, Արցախից բռնի տեղահանված երեխաների, ինչպես նաև տեղաբնակ երեխաների հոգեբանական վիճակը: Այժմ ծրագրում ընդգրկված է 150 երեխա՝ Արցախից, Սիրիայից տեղացի կարիքավոր ընտանիքներից: Այստեղ երեխաները մասնակցում են նկարչական, երգ ու պարի, ձեռագործության և այլ դասընթացների, որոնք անցկացնում են արհեստավարժ մասնագետները: Համախառն շահառուների թիվը կրկնապատկվում է:

Ներկաներին ողջունեց «Հուստ տուն» բարեգործական կենտրոնի գործադիր տնօրեն Մ. Պողոսյանը՝ ներկայացնելով օրվա ծրագիրը: Դիմելով ներկա երեխաներին՝ ասաց. «Թույլ տվեք իմ հույսերն իրականանան. իմ հույսերը կապված են ձեզ հետ: Դուք եք մեր ապագան, և ամեն անգամ, երբ հոգնած եմ լինում կամ տխուր, միշտ գալիս եմ ձեզ մոտ, որովհետև ձեզանից է ճառագում այն հույսը, որ ունենք հզոր ապագա»: Հավելեց նաև՝ իրենց ծրագրերն ավելի ընդլայնում են, բայց բոլորի հիմքում ընկած է ապագայի հույսը, որի հիմնական երաշխավորը մեր երեխաներն են:



Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Գերմանիայի Օստալիի շրջանի նախկին վարչական ղեկավար, «Գթության խոհանոց» կառավարման կոմիտեի խոսնակ, գերմանական Կարմիր խաչի Բաղեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության փոխնախագահ Կլաուս Պավելը՝ ասելով. «Սիրելի երե-

խաներ, ես շատ ուրախ եմ, որ այս կարևոր օրը մշտն էմ ձեզ հետ միասին»: Ապա հարց տվեց երեխաներից մեկին՝ ու՞մ է պատկանում այս աշխարհը, որտեղ բոլորը միասին ապրում են: «Բոլորին...», -պատասխանեց աղջնակը: Իսկ Կլաուս Պավելը հավելեց՝ աշխարհը պատկանում է երեխաներին, ու մշեց՝ մշտապես է աջակցելու «Հուստ տուն» կենտրոնին և այստեղ է իր ընկերների հետ:

Երեխաներին տոնի առթիվ շնորհավորեց ու Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները կատարող «Արամ-արջուկ» նվերներ հատկացրեց Երևանի քաղաքապետի տիկինը՝ կարևորելով «Հուստ տուն» կենտրոնի դերը, որ երեխաներն այստեղ պաշտպանված են:

Վերջում մրցույթի մասնակից ու հաղթող երեխաները պարգևատրվեցին գովասանագրով ու նվերով, ըմբռնվեցին կենտրոնի խոհարարների (նաև արցախցիներ) ձեռքով պատրաստած ուտեստները:

Մ. Պողոսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին, որ երեխաներին նվիրված օրը նման տոնակաությամբ անցավ: Կարևորեց գործընկերների դերը, որոնք մշտապես աջակցում են «Հուստ տուն» կենտրոնի բարեգործական ծրագրերին: Այդ օրը կենտրոնի ծրագրին աջակցեցին «Թամարա» ՍՊ և «Աշտարակ կաթ» ընկերությունները, ինչպես նաև՝ անհատ բարերար Բագրատ Խաչատրյանը՝ տրամադրելով պաղպաղակ և գովազուցիչ ըմպելիքներ:

Ընթացքում զրուցեցի երեխաների, նրանց ծնողների, տեղում դասավանդող ուսուցիչների, երևանցի երիտասարդ կամավորների հետ: Վիկտորյա Դաբադյանը պարուսույց է և աշխատում է հիմնականում արցախցի երեխաների հետ: Գոհ է, ասաց՝ շնորհավրե երեխաներ են և սիրով է աշխատում նրանց հետ:

Այդ օրն էլ Վիկտորյայի սաները հանդես եկան՝ մեծ ոգևորություն պատճառելով ներկաներին: Սոֆի և Յուլյա Սաղաթեյան քույրիկները 2023-ին են բռնի հեռացել Ստեփանակերտի իրենց տնից: Կարոտում են իրենց տանը, դպրոցին, հավատում են՝ վերադառնալու են: Նատալիյա ու Մանեն էլ Հաղորթից են, այժմ Երևանում են բնակվում, «Հուստ տուն» սիրով են այցելում: Մարինե Շամամյանը Մարտունու շրջանի Գիշի գյուղից է, արդեն 6-րդ դասարանի աշակերտ թոռան՝ Սերժ Շամամյանի հետ էր այստեղ: Վարժով են բնակվում Նոր-Նորքում: Կարոտում է հայրենի գյուղին: Թոռանը Սերժ են կոչել՝ ի պատիվ



1990-ականներին թշնամու դեմ հերոսաբար մարտնչած ու նահատակված պապի: Սերժն այստեղ մասնակցում է երգ ու պարի, նկարչության և այլ խմբակների դասընթացներին: Օրվա ընթացքում նաև մասնակցեց նկարչության մրցույթին: Անուշ Ստեփանյանը երկու թռեկներ՝ Միքայել և Մարկ Սահակյանների հետ էր եկել: 2023-ին բռնի տեղահանվել են Ստեփանակերտից, կարոտում են, ու հավատում է՝ տուն է վերադառնալու:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿԻՆՔԸ»՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՄՈՒՐ

Ուսաստանյան «Դիալոգ» Դիաստանական կազմակերպությունը, որի նախագահն է Յուրի Նավոյանը, համաձայն մատենաշարի շրջանակներում 2024թ. 500 օրինակով հրատարակել է ռուս ճանաչված լրագրող, բանաստեղծ, հասարակական գործիչ Վիկտոր Կոնոպլովի «Հայկական երկինքը» գիրքը, որում տպագրված են հեղինակի տարբեր տարիներին գրված բանաստեղծություններ, ակնարկներ և հրապարակախոսական հոդվածներ՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, անցած ու ներկա իրողություններին: Գրքի շնորհանդեսը կայացավ հունիսի 11-ին Երևանում՝ «Անի պլազա» հյուրանոցի դահլիճում:

Վիկտոր Կոնոպլովի հետ ծանոթացել են Արցախում՝ Քաջաթղի շրջկենտրոն Բերձորում: 2006 թվականից սկսած բանաստեղծը հաճախ էր այցելում Արցախ և մեր հայրենիքը շատ սիրեց ու իրեն համարում է հայ: Այդ տարիներին Արցախում և ՀՀ-ում հաճախ էին կազմակերպվում «Ռուսական խոսքի օրեր» նախագիծը, և Վիկտոր Կոնոպլովը դրանց հիմնական մասնակիցների շարքում էր: 2014թ. ապրիլի 21-ին Կոնոպլովը Բերձորում էր. Արցախում տեղի էին ունենում հայ նշանավոր երգահան Միքայել Թարիվերդիկի երաժշտության օրերը: Նրա հետ էր նաև Թարիվերդիկի կինը՝ Վերա Թարիվերդիկան: Բերձորի Վահան Թեքեյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցի դահլիճում կայացավ երաժշտական ցերեկույթ՝ Բերձորի աշակերտների մասնակցությամբ, Կարինե Մովսեսյանի ղեկավարությամբ: Այդ օրերին Կոնոպլովին և նրա հետ Բերձոր եկած մտավորականներին ուղեկցել են նաև Ծիծեռնավանք: Ինչպես գի-



տենք, ցանկացած օտարերկրացի, որ այցելում էր Արցախ, աղբյուրանքների կողմից ընկնում էր «սև ցուցակ»: Բայց Կոնոպլովը դա երբեք հաշվի չի առել:

Գրքի լույսընծայումը կայացել է Գոռ Կարախանյանի աջակցությամբ: Շնորհանդեսին մասնակցում էին Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի (ՀԱԵ ԱԹ) առաջնորդ

ժողովուրդների՝ լինել ճշմարտության կողմին: «Մենք մշակութային ազգ ենք, որովհետև անհնար է լինել անհավատ ու կառուցել Գանձասար, հնարավոր չէ՝ գիր ու գրականություն, աստվածային լեզու չիմանալ ու հիմնել Ամարաս, հնարավոր չէ չխոսել բնության հետ, չճանաչել քո լեռնաշխարհը և կառուցել Կատարոյի վանք: Եվ ամենակարևորը՝ հնարավոր չէ Տիրոջ չկրել քո հոգում և կառուցել Ամենափրկիչը Շուշիում: Այսպիսով մշակույթը մեր ներաշխարհն է, որն այսօր արտացոլված է մեր բարեկամի՝ Կոնոպլովի գրքում», -հավելեց ԱԹ առաջնորդը:

Վ. Կոնոպլովը, շնորհակալություն հայտնելով իրեն աջակցողներին և ներկաներին, ցավ հայտնեց 2020 թվականից հետո Արցախում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ: Իր վերջին բանաստեղծություններից մեկը կոչվում է «Արցախը դժբախտության մեջ»: Նշեց՝ իր ուշադրության կենտրոնում մշտապես են հայերը՝ ազգային ինքնատիպ պատմական և մշակութային միջավայրով, լի կյանքի շրջադարձերով: Խոսելով հայ ժողովրդի հանդեպ իր զգացմունքների մասին՝ ասաց՝ Հայաստան ու Արցախ այցելելուց, հյուրասեր ու իմաստուն մարդկանց հետ հանդիպելուց, հայկական հնագույն մշակույթի հետ ծանոթանալուց հետո են դրանք առաջացել: Ինչ վերաբերում է հայ-ռուսական բարեկամությանը, նրա կարծիքով աշխարհում ոչինչ չի խաթարի հայ և

ռուս ժողովուրդների բարեկամությանը: Հավելեց նաև՝ իր ստեղծագործությամբ հայ ժողովրդին ոչ ծանոթներն է ներկայացնում հայկական ինքնատիպ աշխարհը:

Վ. Կոնոպլովին ներկայացրեց գրքի առաջաբանի հեղինակը՝ Աշոտ Բեգլարյանը, որը մշտապես կապի մեջ է նրա հետ, և ուղեկցում էր Արցախ այցելելու օրերին: Ասաց՝ իրենց հանդիպումը եղել է միաժամանակ անսպասելի և սպասելի: «Գրքի առաջաբանում արդեն ասել են՝ անսպասելի հանդիպումներ չեն լինում: Որտե՞ղ Ռուսաստանի Նիժնի Նովոգորոդ քաղաքը, որտե՞ղ Արցախը, սակայն, Աստծո հաճությամբ է իրարից հազարավոր կիլոմետր հեռվում գտնվող բնակավայրերի մշակութային ներկայացուցիչները հանդիպեն, ունենան նույն մտածողությունը և բարեկամանան, եղբայրանան», -ասաց Ա. Բեգլարյանը և տեղեկացրեց՝ 2006 թվականին է ծանոթացել Վիկտորի հետ, սկզբում համացանցի միջոցով, այնուհետև նրան հրավիրել է Արցախ: Առաջին անգամ, երբ Կոնոպլովը եկել է Արցախ, իր և գրող Ալբերտ Ոսկանյանի



ուղեկցությամբ եղել է Արցախի բոլոր գլխավոր սրբավայրերում: Այդ օրերի մասին գրել է «Վեց օր Դրախ-

տում» ակնարկը: Տեղեկացրեց նաև՝ 2016թ. ապրիլյան պատերազմի օրերին Կոնոպլովը եկել է Արցախ և իր խմբով ֆիլմ նկարահանել Թալիշում կայացած դեպքերի մասին: Ռուսերեն է թարգմանել Վարդան Հակոբյանի գրած Արցախի օրհներգը: Իր խոսքն ամփոփելիս ասաց. «Այժմ շատ բան է փոխվել Հայաստանում: Վատ ժամանակներ են Ռուսաստանի և Հայաստանի պաշտոնական հարաբերություններում: Սակայն դրանք ազդեցություն չպետք է ունենան հայ-ռուս ժողովուրդների բարեկամության վրա: Ընդհակառակը, պետք է ամեն ինչ արվի՝ ավելի ամրապնդվեն մեր բարեկամական կապերը»:

Եղան այլ ելույթներ ևս: Արցախցի գրող Ալբերտ Ոսկանյանը և ԱՀ ԿԳՄՍՆ աշխատակից Ռուբեն Օսիպովը նույնպես միշտ Վ. Կոնոպլովի կողքին էին, երբ այցելում էր Արցախ: Իրենց խոսքում նրանք նույնպես բարձր գնահատեցին հայ ժողովրդի բարեկամի ստեղծագործությունը՝ նվիրված Արցախին, ընդհանրապես՝ Հայաստանին ու իր ժողովրդին:

Արցախցի դպրոցականներն ընթերցեցին նորատիպ գրքի բանաստեղծություններից:

Շնորհանդեսը եզրափակվեց Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի և Դադիվանքի նախկին հոգևոր հովիվ, այժմ Եռաբլուրի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգևոր սպասավոր Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանի համատեղ հնչեցրած աղոթքով: Վերջում հեղինակն իր մակագրությամբ «Հայկական երկինքը» գիրքը նվիրեց ներկաներին: Հավաստեց՝ մշտապես Արցախի հետ է:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՐԵՄԻԱ, ԹԵ՛ ԿԱՏ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շրջապատում հաճախ կարելի է լսել, որ մարդիկ զանգատվում են կյանքից, առողջությունից, այլ մարդկանցից, քաղաքական, սոցիալական իրավիճակից: Շատ դեպքերում էլ օգտագործում են տերմիններ, որոնց նշանակությունը ճշգրիտ չի՝ մանալով՝ իրենց են վերագրում անհամապատասխան հիվանդություններ, հոգեկան խանգարումներ: Ունենալով վատ ինքնագնահատություն կամ գտնվելով վատ տրամադրության մեջ՝ զրուցակիցները հաճախ ասում են, որ իրենք դեպրեսիայի մեջ են կամ ենթադրում են, որ ունեն ներքո: Որոշակի ինֆորմացիա ստանալուց հետո հնարավոր է հասկանալ դեպրեսիայի ու վատ տրամադրության տարբերությունը:

Մեզանից յուրաքանչյուրը բախվում է վատ տրամադրության հետ: Պատճառները կարող են տարբեր լինել՝ կենցաղային անախորժություններ, կոնֆլիկտներ աշխատավայրում, խնդիրներ անձնական կյանքում, նույնիսկ պարզապես վատ եղանակը կարող է ազդել մեր տրամադրության վրա: Վատ տրամադրությունը երկար չի տևում, քանի որ դա հաղթահարելը միանգամայն հեշտ է. սպորտ, հոբբի, հանդիպում ընկերների հետ եւ ուրիշ հաճելի զբաղմունքներն օգնում են վերադառնալ նորմային:

Իսկ եթե ահա վատ տրամադրությունը ձգվում է երկար ժամանակ ու սովորական բաները դադարում են ուրախացնել, ուրեմն արժե մտածել մասնագետի դիմելու մասին: Սովորական մեկամղժոտության կամ վատ տրամադրության հետեւում կարող է թաքնված լինել մեկնարկվող դեպրեսիան:

Ինչպե՞ս տարբերել: Վատ տրամադրությունն ընդամենը վատ տրամադրություն է: Դյուրագրգռությունը, ընկճվածությունը, զայրույթը, նյարդայնությունը կարող են լինել նորմալ հոգեկան ռեակցիաներ: Եթե դրանց ուժն այնքան է, որքան նախկինում նման անկումների ժա-

մանակ, ապա կարելի է չանհանգստանալ: Իսկ եթե տրամադրության անկումն ավելի արտահայտված է, քան նախկինում, կամ ստանում է ինչ-որ նոր երանգներ, կամ խորություն, ավելի է երկարում, զուգորդվում է նախկինում հաճույք պատճառող բաների հանդեպ հետաքրքրության կորուստով, անտարբերությամբ, ուրեմն արժե զգուշանալ: Դեպրեսիվ վիճակներում հայտնված մարդիկ հաճախ են նշում, որ նրանց թվում է, թե ամբողջ էներգիան սպառվել է, սովորական



գործողությունները, ինչպես, օրինակ՝ ճաշ պատրաստելը, տուն հավաքելը, մեքենա վարելը, դառնում են դժվար կատարելի: Դեպրեսիայի ժամանակ ցածր հուզական ֆոնը, ապաթիան (անտարբերություն), անգեղոնիան (հաճույքների հանդեպ հետաքրքրության կորուստ) կարող են զուգորդվել հետեւյալ երեւույթներով.

սնդից հրաժարում կամ շատակերություն, ինքնասպանության մասին մտքեր, կաշուն մտքեր, հատկապես մեղքի կամ ինքնացածորացման ուղղությամբ, տագնապայնություն, տրամադրության անպատճառ փոփոխություններ կամ արտահայտված թախժոտություն, շարժողական, սոցիալական եւ այլ ակտիվության նվազում,

սոմատիկ ախտորոշումներ՝ ցավ, ծանրություն, անհարմարվետություն, որոնք չունեն բժշկական հիմք, օրինակ՝ մարդ կարող է զխացավ ունենալ, բայց բժշկական հետազոտությունը որեւէ պաթոլոգիա չբացահայտի,

ուշադրության կենտրոնացման հետ՝ դժվարություններ, հիշողության հետ՝ խնդիրներ,

քնի խանգարումներ՝ անքնություն կամ շատ երկար քուն,

լիբիդոյի (սեռական բնազդ) ցածրացում: Այս ամենը դժվար է լինում նկատել դեպրեսիայի մեջ գտնվող մարդու համար: Մինչդեռ շրջապատի մարդիկ կարող են ուշադրություն դարձնել, երբ իրենց ծանոթը, բարեկամը, ընկերը կամ գործընկերը սկսում է անսովոր պահել իրեն:

«Ես վատն եմ, մյուսները վատն են, աշխարհը վատն է»: Դեպրեսիայում գտնվող մարդը, հատկապես ծանր աստիճանում, չի կարող ասել զոնե ինչ-որ բան, որից նա գոհ է եւ համարում է դրական: Շատ հաճախ դժգոհությունը սկսում է իրենից: Այդ վիճակում ինքնաքննադատությունը մղվում է առաջին պլան, մարդը դառնում է բացարձակ դժգոհ իրենից ու կյանքի ցանկացած ոլորտից: Նույնիսկ սովորական հոգնածությունը կարող է դիտարկվել որպես սեփական ծուլություն: Այն դեպքերում, երբ սովորական մարդը կպառնի հանգստանալու, դեպրեսիայով հիվանդները կծգտեն աշխատել մինչև հյուսվելը՝ վատթարացնելով իրենց վիճակը:

Հաճախ բացասականը կարող է ուղղվել ուրիշ մարդկանց վրա: Շրջապատն ընկալվում է բացասական երանգներով՝ որպես պրոբլեմների ու դժվարությունների աղբյուր, առաջանում է ագրեսիա: Երբեմն մարդ «պայթում է» իր մտերիմների վրա: Դրանից բացի, կարող են լինել կաշուն մտքեր այն մասին, որ շրջապատում գոյություն ունեցող

բացասականը պատիժ է նախկինում կատարած իր որեւէ գործողության համար: Դեպրեսիվ հիվանդը դադարում է գիտակցել, որ պրոբլեմները երբեմն առաջանում են հենց այնպես եւ կազմում են կյանքի նորմալ մասը. նա մեղադրում է իրեն, ուրիշներին կամ «չարամիտ ճակատագրին»:

Դեպրեսիվ վիճակում մարդու ներքին մարտկոցը մարում է: Պատահում է, որ մարդը մոտիվացիա չի ունենում նույնիսկ բարձրացնելու հեռախոսը, երբ իրեն զանգում են. չկան ռեսուրսներ, իսկ պատասխանելն ու զրույցի համար բառեր ընտրելը թվում են շատ մեծ աշխատանք: Դեպրեսիան զգալի անդադառնում է աշխատանքի վրա. կորչում է մոտիվացիան, հոգս են ցնդում հետաքրքրությունն ու կրեատիվությունը, ի հայտ չեն գալիս նոր ծրագրեր ու գաղափարներ, սովորական խնդիրների լուծումը թվում է ահեղ ջանք պահանջող աշխատանք, գործընկերների հետ շփումը շեղվում է, մարդ վատ է ընկալում ինֆորմացիան:

Դեպրեսիան հոգեկան խանգարում է, ինչը բացասաբար է անդադառնում բնագոյների վրա, որոնցից է ինքնապաշտպանական բնագոյն: Դեպրեսիայի մեջ գտնվող մարդը, անբավարարված լինելով իրենով եւ իր կյանքով, արդյունքում սկսում է մտածել, որ ինքը անօգուտ, անհաջողակ մարդ է, ամեն ինչ վատ է, ուրեմն՝ ինչո՞ւ է նա ապրում: Մահվան մասին մտքերը վառ արտահայտված դեպրեսիայի նշան են, որի դեպքում անհապաղ մասնագիտական օգնություն է պետք:

Վերլուծեք ձեզ, համեմատեք ախտանշանները եւ եզրակացրեք՝ մի՞թե դեպրեսիայի մեջ եք, թե՞ պարզապես վատ տրամադրություն ունեք: Եթե հասկանում եք, որ այնուամենայնիվ ձեզ մոտ դեպրեսիայի նշաններ կան, մի հետաձգեք մասնագիտական օգնության դիմելը:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԲԼԵՉ ՊԱՍԿԱԼԸ ԱՄՏԾՈՒ ՀԱՆԴԵՊ ԻՐ ՈՒՆԵՅՈՒՄ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

Աղոթք
«Ես չեմ խնդրում Քեզ առողջություն, հիվանդություն, կյանք կամ մահ, բայց ես խնդրում եմ՝ տնօրինիր իմ առողջությունը, իմ հիվանդությունները, իմ կյանքը և մահը քո փառքի համար... Միայն դու գիտես, թե ինչն է ինձ համար նպատակային, Դու ես Տերն ու Արարիչը: Վարվիր ինձ հետ քո կամքի համաձայն: Տո՛ւր ինձ, վերցրու՝ ինձանից, միայն թե ձևավորիր իմ կամքը Քո կամքի համեմատ: Ես հաստատ գիտեմ, Տեր, Քեզ հետևելը լավ է, քեզ ցավեցնելը՝ վատ: Եվ դրանից այն կողմ ես չեմ տարբերում, թե որն է բարին և որը՝ չարը: Ես չգիտեմ, թե ինչն է ինձ համար ամենալավը՝ առողջությունը, թե հիվանդությունը, հարստությունը, թե աղքատությունը, ես ոչինչ չգիտեմ այս աշխարհի մասին: Այս գիտությունը դուրս է մարդկանց և հրեշտակների հասկացողության սահմաններից: Այն թաքնված է Քո նախախնամության գաղտնարաններում, որին ես խորապես երկրպագում եմ, բայց որը՝ չեմ էլ փորձում հասկանալ»:

Կյանքը
Մենք բոլորս գիտենք Պասկալին՝ որպես գիտության ներկայացուցիչ: Ֆրանսիացի գիտնական Բլեզ Պասկալի կյանքի զխավոր նպատակն էր քրիստոնեական հավատքի պաշտպանությունը: Նա վստահ համոզմունքներով հավատացյալ էր, և նրա կյանքի երազանքն էր գրել մի գիրք, որը կպարունակի աթեիզմի ամբողջական գիտական քննադատությունը: Պասկալը, որպես լուրջ մարդ և գիտնական, լավ հասկանում էր իր անելիքների հետևանքները: Սակայն իր մահվան պատճառով նա չհասցրեց իրագործել իր գերնպատակը, բայց մնացին նրա գրառումները, որոնք հետագայում տպագրվեցին «Մտքեր կրոնի մասին» խորագրով աշխատության մեջ: «Փարի»-ի հայտնի հատվածներից մեկում Պասկալը ապացուցում է Աստծո հանդեպ հավատքի անհրաժեշտությունը՝ օգտագործելով հավանականության տեսությունը: Իր առաջարկած տրամաբանության պարզաբանումն այսպիսին է. «Հավատացյալ մարդը,

զոհաբերելով իր երկրային օրհնությունների որոշ մասը, հույս ունի հավերժություն ձեռք բերել, այսինքն՝ ողջ գումարի վրա գրագալով՝ նա ձեռք է բերում անսահման շահույթի հնարավորություն: Աթեիստը, թեկուզև ինքն իրեն է պահում այն ամենը, ինչը զոհաբերում է հավատացյալը, սակայն հավիտենություն չափելու անգամ գրոյական հնարավորություն չունի: Խաղի տեսության տեսանկյունից աթեիստական մարտավարությունն ուղղակի անիմաստ է:

Իմաստուն մեջքերումներ
«Մենք Աստծուն այնքան պարտական ենք, որ հավերժությունն անգամ չի բավարարի՝ վճարելու մեր պարտքերը: Փոխարենը մենք կարող ենք շնորհակալ գտնվել»:
«Եթե Աստված չկա, բայց ես հավատում եմ Նրան, ես ոչինչ չեմ կորցնում: Բայց եթե Աստված կա ու ես չեմ հավատում Նրան, ես կորցնում եմ ամեն ինչ»:
«Կշռեք շահույթը և կորուստը՝ գրագալով՝ կա՞, արդյոք, Աստված: Դիտարկենք երկու դեպք. եթե

ասեք: Ցանկանո՞ւմ եք, որ մարդիկ հավատան ձեր առաքինություններին, մի պարծեցե՞ք դրանցով»:
«Մարդուն տրված ամենամեծ արտոնությունը վերից՝ ինչ-որ մեկի կյանքում լավ փոփոխությունների պատճառ լինելն է»:
«Որքան ավելի խելացի ու բարի է մարդը, այնքան ավելի լավ է նկատում մարդկանց մեջ դրականը: Ապրե՛ք բարություն գործելով՝ ինչպես ձեր, այնպես էլ մյուսների համար»:
«Լավ գործերի լավությունը՝ դրանք ծածուկ պահելու կարողությունն է»:
«Մարդիկ հակված են հավատալ ոչ թե նրան, ինչը կարելի է ապացուցել, այլ՝ նրան, ինչն իրենց ճաշակով է»:
«Եթե Աստված ժամանակ առ ժամանակ «մեզ չղներ իր ուսերին», մենք ժամանակ չէինք ունենա նայել երկնքին»:

Թարգմանեց
Անուշ Վարդումյանը

Աղբյուրը՝ bible-facts.ru

ՀԱՌԱՐԱՐ ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ	✉ p.երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info	Մեջքերումների եւ փաստական տվյալների ստույգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Թերթը վաճառքի ենթակա չէ:	Տպագրվում է «Լիմուշ» ՍՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 30.06.2025թ.:
--	--	---	--	--